Որքան էլ փորձեն պարզունակ հնարքներով խիստ հետեւողականորեն սեւացնել նախկինում տեղի ունեցած ընտրական գործընթացները, ոչ թե վերացական խոսքով, այլ կոնկրետ գործով հարկ էր առաջընթաց արձանագրել, մինչդեռ բացահայտ տեղի է ունենում նախկին արատավոր պրակտիկան անհամեմատ մեծ չափերով վատթարացնելու գործընթաց:

Կարդացեք՝ էջ 4

Հիմա նույն իրավիճակը Հայաստանում է. մի իշխանություն, որ ինքն է երկիրը հասցրել կոլապսի, անկախ, ինքնիշխան երկիրը վասալային կախվածության մեջ է գցել Ադրբեջանից եւ Թուրքիայից, մեղադրանք է ներկայացնում այն ղեկավարներին, որոնց օրոք Հայաստանի ինքնիշխանությունը մի քանի աստիճան ավելի բարձր է եղել, քան հիմա:

Կարդացեք՝ էջ 5



«Ադրբեջանի համար բռնագաղթը հատուկ նշանակություն ունի, քանի որ ադրբեջանական տարածքների օկուպացիան եւ զավթումը պատճառ դարձան, որ մեկ միլիոնից ավելի ադրբեջանցիներ դարձան փախստական եւ ներքին տեղահանված մարդիկ: Տասնյակ տարիներ նրանք ստիպված էին իրենց հարազատ վայրերից հեռու ապրել ու զրկանքներ կրել»:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 101 (4236), 23 հունիս, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Հունիսի 7-ի ընտրությունների արդյունքում սահմանադրական մեծամասնություն, անգամ 50 տոկոս չստացած ՔՊ-ականները որոշել են փոխել պատգամավորական երդման տեքստը՝ այն հարմարեցնելով Փաշինյանի հորինած «իրական Հայաստանի» գաղափարին: Տեքստից դուրս են թողնվելու համազգային նպատակներին շեշտադրումները, այն նեղացնելու են հայաստանյան տարածքով: Մինչ այժմ երդման հետեւյալ տեքստն էին արտասանում. «Հանուն համազգային նպատակների իրականացման եւ հայրենիքի հզորացման ու բարգավաճման՝ երդվում եմ՝ բարեխղճորեն կատարել ժողովրդի առջեւ ունեցած պարտավորություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը եւ օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության եւ շահերի պահպանմանը, անել ամեն ինչ՝ քաղաքացիական համերաշխության, ազգային ու համամարդկային արժեքների պահպանման համար»: Ալեն Սիմոնյանի, Արուսյակ Ջուլհակյանի եւ Հասմիկ Հակոբյանի հեղինակած նախագծով առաջարկվում է տեքստից դուրս թողնել «հանուն համազգային նպատակների իրականացման», «ազգային ու համամարդկային արժեքների պահպանման համար» ձեւակերպումները: Փոխարենը տեքստում ավելացնել, որ ՀՀ քաղաքացիների համար անելու են ամեն ինչ՝ «անվտանգության ու ազատությունների պաշտպանության համար», ինչպես նաեւ՝ երդման տեքստը եզրափակել Փաշինյանի հետպատերազմական լոզունգներից մեկով. «Փառք նահատակներին, եւ կեցցե Հայաստանի Հանրապետությունը»:

Ներիշխանական քննարկումների մասնակիցները մեզ պատմել էին, որ հունիսի 7-ի ընտրություններին ՔՊ-ի՝ սահմանադրական մեծամասնություն չստանալու փաստից ուրախացողներ եղել են նաեւ իշխանական թեւում: Ոմանք ուրախացել են, որ այս արդյունքները հնարավորություն չեն տա Փաշինյանին՝ Ռուսաստանի դեմ կտրուկ քայլերի գնալ, ոմանք՝ զուտ անձնական նկատառումներով, օրինակ, Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը: Բանն այն է, որ ՔՊ-ում վստահ են եղել, որ ընտրություններից հետո Ավինյանը փոխվելու է: Սահմանադրական մեծամասնություն ունենալու դեպքում մի շարք համայնքներում, այդ թվում՝ Երեւանում, նոր ընտրություններ կկազմակերպեին, քանի որ «թուրներն աջուձախ կտրելու էր»: Սակայն այս արդյունքներից շոկի մեջ են հայտնվել, եւ ակնհայտ է, որ պլանները փոխվելու են, որովհետեւ նվազած լեգիտիմությամբ երերուն իշխանությունը հնարավորություն չի ընձեռում նման ռիսկային քայլերի գնալ: Դա կարող է իշխանությունը քանդել ներսից:

Աննախադեպ ցինիկ

Հունիսի 7-ի ընտրությունները դեռ շատ կքննարկեն ու կվերլուծեն: Ոմանք կփորձեն հասկանալ, թե ինչու սխալվեցին, ոմանք կհայտարարեն, որ ի սկզբանե գիտեին ելքը: Իհարկե, շատ քիչ մարդիկ կային Հայաստանում, որոնք հավատում էին, թե ընտրություններով հնարավոր կլինի իշխանություն փոխել: Ոչ միայն այն պատճառով, որ Հայաստանում երբեւէ ընտրությամբ իշխանություն չի փոխվել, այլեւ հատկապես այն, որ մարդիկ գիտեն, թե ինչու են Նիկոլ Փաշինյանն ու իր թիմն այդքան կառչած իշխանությունից: Գիտեն այն վախերը, որոնք նրանք ունեն իշխանափոխությունից եւ իրենց ապագայի անորոշությունից: Ո՞վ այսքան ավերածություն ու ապօրինություն գործեր, այսքան մարդու կյանքը, ունեցվածքը, բարեկեցությունը վտանգեր, մեր ժողովրդին այսքան վնաս պատճառեր ու նման անհանգստություններ չունենար: Բայց վերադառնալով ընտրությունների թեմային. դրանք, այնուամենայնիվ, «աննախադեպ» էին, քանի որ, չնայած Հայաստանում արդար ընտրությունների ավանդույթներ չեն ձեւավորվել, բայց նաեւ այսքան ցինիկ ու բացահայտ ընտրախախտումներ ու ընտրաճնշումներ էլ չեն իրականացվել: Նախընտրական մի քանի ամսվա ընթացքում այս իշխանությունը պետական ընտրակաշառքի, հալածանքների ու ճնշումների աննախադեպ ռեսուրս կիրառեց: Այսքան կալանավորվածներ ու տեղաշարժից զրկվածներ, այսքան սպառնալիքներ, բռնություն, արտաքին աշխարհից ճնշումներ, հոգեբանական գրոհ ընտրողների վրա մենք վերջին 30 տարում չէինք տեսել: Եվ, այս ամենով հանդերձ, իշխանությունը չկարողացավ 50 պլյուս 1 ձայն տանել եւ վերջում էլ բացահայտ ապօրինությամբ գողացավ մի ողջ կուսակցության մանդատներ՝ 3 հազար մարդու ապօրինաբար զրկելով ընտրական իրավունքից: Հիմա էլ քրեական եւ այլ մեթոդներով փորձում են այդ կուսակցության առաջնորդին սնանկացնել:

Նիկոլ Փաշինյանը Գագիկ Ծառուկյանին ոչ միայն զրկեց խորհրդարան մտնելու հնարավորությունից՝ ԿԸՀ-ի միջոցով գողանալով ԲՀԿ-ի ձայները, այլեւ մտադիր է Ծառուկյանին սնանկացնել: Մեկ շաբաթից ավելի է՝ ՊԵԿ-ը համատարած ստուգումներ է իրականացնում Ծառուկյանի եւ նրա ընտանիքի հետ կապվող բոլոր օբյեկտներում: Մի կողմից՝ հավանաբար փորձում են Ծառուկյանին քաղաքականապես չեզոքացնել, թույլ չտալ, որ հետընտրական ակտիվություն դրսեւորի, մյուս կողմից՝ Փաշինյանն իր սիրած գործով է զբաղվում՝ փորձում է խլել իր դեմ դուրս եկած անձի ունեցվածքը: Նաեւ կապիտալի վերաբաշխում են իրականացնում երկրով մեկ: Երեկ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը հպարտությամբ հայտարարեց, որ անվավեր են ճանաչել Ծառուկյանի «Շանգրի Լա» խաղատան՝ 2014 թվականին տրամադրված լիցենզիան: Օրեր առաջ էլ դատախազությունը գործընթաց է սկսել «Արարատցեմենտի» մասնավորեցման հետ կապված: Նման անթաքույց քաղաքական հետապնդումներ ընդդիմադիր ուժի հանդեպ, որն ընտրություններին է մասնակցել, ՀՀ քաղաքացիները չեն հիշում:

ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ Է ՎՃԱՐԵԼ ԲՅՈՒՋԵ

Մենք տեղեկացանք, որ վերջերս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ որպես «պարաֆինի հարկ», մեծ գումարներ է վճարել պետությանը: Մեր աղբյուրի պնդմամբ, խոսքը մի քանի 100 հազար դոլարի մասին է: Իշխանությունները՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, վերջին շրջանում սեւեռվել են մոմի արտադրության ու վաճառքի վրա եւ քանիցս հայտարարել, որ Հայ առաքելական եկեղեցու ողջ գործունեությունը, այդ թվում՝ մոմի արտադրությունն ու վաճառքը, պետք է հարկվի: Խոսակցություն է գնում նաեւ եկեղեցապատկան տարածքները Մայր Աթոռի տնօրինությունից վերցնելու մասին: Ըստ ամենայնի, Ամենայն հայոց կաթողիկոսը որոշել է կամովին կատարել Փաշինյանի պահանջը՝ հույսով, որ գուցե նրա վերաբերմունքը մեղմվի: Մայր Աթոռի տեղեկատվական կենտրոնի ղեկավար Տեր Եսայի քահանա Արթենյանը «Հրապարակի» հետ զրույցում հաստատեց մեր տեղեկությունը, որ մոմի հետ կապված մեծ գումարներ են վճարվել պետբյուջե, սակայն ասաց, որ գումարի հստակ չափ չի կարող ասել: Միայն նշեց, որ խոսքը բավականին մեծ գումարի մասին է:

Ո՞Վ ԷՐ ՏԵՍԵԼ ՆՄԱՆ ԲԱՆ, ՈՐ ՁԱՅՆԵՐԸ ՀԱՇՎԵԼԻՍ ԱՅՍՔԱՆ ՁԱՅՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉՎԻ

*«Հրապարակի» զրուցակիցը նախկին դատավոր **Ալեքսեյ Սուքոյանն** է:*

- 7 քաղաքական ուժ դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելու հունիսի 7-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները: Աննախադեպ երեւույթ է, որ այսքան շատ ուժեր դիմեն ՍԴ՝ չճանաչելով ընտրությունների արդյունքները: ՍԴ-ն արդեն որոշում է կայացրել, որ Արտակ Զեյնալյանը եւ Վլադիմիր Վարդանյանը չեն մասնակցելու դիմումների քննությանը, քանի որ «կանխակալ վերաբերմունք ունեն» կողմերի հանդեպ: Նրանցից մեկը «Հանրապետություն» կուսակցության անդամ է եղել, մյուսը՝ ՔՊ: Քանի որ Նիկոլ Փաշինյանը կուսակցական նախկին գործիչներին ուղարկել է ՍԴ, ուստի նման որոշումն անխուսափելի էր: «Հայաստան» դաշինքը դիմել է նաեւ Սեդա Սաֆարյանի մասնակցությունը կասեցնելու պահանջով, քանի որ նա Մարտի 1-ի գործով ներկայացուցիչ է եղել, զեկույցի համահեղինակ եւ կանխակալ վերաբերմունք ունի Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ: Այնուամենայնիվ, ինչ եք կարծում՝ ՍԴ-ն կարող է անաչառ որոշում կայացնել, թե՞ ոչ: Նկատենք նաեւ, որ 2021-ին էլ «Հայաստան» դաշինքը դիմել էր ՍԴ՝ նույն պահանջով, սակայն մերժվեց:

- Անկողմնակալ արդյունքի, որոշման վերաբերյալ թերահավատ եմ, հաշվի առնելով այսօրվա Սահմանադրական դատարանի կազմը: Այո, երկու դատավոր չեն մասնակցելու գործի քննությանը, սակայն Սեդա Սաֆարյանը մասնակցելու է, նրա օբյեկտիվությունը եւս ինձ համար կասկածի տակ է: Նույն հիմքերով նա նույնպես չպետք է մասնակցեր, հաշվի առնելով նրա նախկին կուսակցական պատկանելությունը, նրա հայտարարությունները եւ այլն: Նա ինչքանո՞վ կլինի օբյեկտիվ՝ մեծ հարցական է: Վերջնական արդյունքի մասին կդժվարանամ հստակ գնահատական տալ այս պահին, սակայն կարող եմ ասել, որ կուսակցությունները ճիշտ են արել՝ դիմելով ՍԴ, ես դրական եմ վերաբերվում այս քայլին:

- Բայց եթե ՍԴ-ն անկողմնակալ չէ, եւ արդյունքում արդարությունը չի վերականգնվելու, ի՞նչ է տալու ՍԴ դիմելը, ընդդիմադիր զանգվածին եւս մեկ անգամ հիասթափեցնելուց բացի:

- Իսկ եթե չդիմեին, ի՞նչ էին շահելու: Ենթադրենք՝ չեն դիմել, ի՞նչ է տալու դա: Անկախ վերջնարդյունքից, Սահմանադրական դատարան դիմելն իրավական առումով ճիշտ քայլ էր: Նույնիսկ եթե այն բացասական վճիռ կայացնի, հայցվորները հերթական ապացույցը կունենան իրենց ձեռքին, թե Հայաստանում օրենքն ինչպես է գործում: Եթե չդիմեին ՍԴ, հասարակությունը կարող էր հարցնել՝ ինչո՞ւ չդիմեցիք, գուցե դատարանն օբյեկտիվ վճիռ կայացներ….

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստացի օրենքին դեմ գնաց, անվավեր ճանաչեց երեք ընտրատեղամասերի արդյունքները, ապա հայտարարեց, որ վերաքվեարկություն չի նշանակելու: Ի՞նչ քայլ է սա:

- Պարտադիր չէ իրավաբան լինել՝ հասկանալու համար, որ աննախադեպ երեւույթ է սա: Մենք լսել էինք մոլդովական սցենարի մասին, լսել էինք ռումինական սցենարի մասին, բայց պարզվեց, որ կա նաեւ հայկական սցենար, ինչն առավել աննախադեպ է, քան մնացյալը: Ձայները հաշվելու ընթացքում ԿԸՀ-ն ուղղակի որոշում է, որ պետք է 3 հազար ձայն անվավեր ճանաչի եւ Նիկոլ Փաշինյանի ցանկությունը կատարի: Նման երեւույթ ոչ միայն Հայաստանում երբեք չի եղել, այլեւ ամբողջ աշխարհում սա չլսված բան է, ո՞վ էր տեսել նման բան, որ ձայները հաշվելու ընթացքում այսքան ձայն կարող է ուղղակի անվավեր ճանաչվել, ու նոր քվեարկություն չնշանակվել:

- Նիկոլ Փաշինյանը քանիցս հայտարարել է, որ ընդդիմության երեք առաջնորդներին տասը տարով բանտարկելու է, ունեզրկելու է, այն դեպքում, երբ նրանցից առնվազն երկուսը գոնե պետական չինովնիկ երբեք չեն եղել, ի տարբերություն Փաշինյանի եւ իր թիմակիցների:

- Նա այսպիսի հայտարարություններ անելու իրավունք չունի: Մեր երկիրն այս ճանապարհով գնում է դեպի բռնապետություն: Օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունները վերջին տարիներին միաձուլվել են՝ դառնալով մեկ ընդհանուր իշխանություն, ինչը շատ վատ է: Գործադիրն ու օրենսդիրը վաղուց են միացվել, մնացել են սակավաթիվ դատավորներ, շուտով այս համակարգն էլ լրիվ կվերցնեն իրենց հսկողության տակ, ու վերջ…. Բռնապետությունը պատրաստ է:

- Ի դեպ, Բարձրագույն դատական խորհուրդը շարունակում է նպաստել այս ամենին, անգամ կարծիքներ կան, որ Կարեն Անդրեասյանի ժամանակ այսքան վատ չէր այս կառույցի վիճակը, որքան հիմա է:

- Կարեն Անդրեասյանն աշխատում էր անօրեն: Վկայությունն այն տասը գործերն են, որոնք գտնվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Մեկուկես տարվա ընթացքում նա ուղղակի որոշեց առանց որեւէ հիմքի դադարեցնել տասը դատավորի գործունեություն: Ինչ վերաբերում է այսօրվա ԲԴԽ-ի աշխատանքին, ապա ես ոչ մի դրական բան չեմ լսել, չեմ տեսել, սակայն այն կարծիքին եմ, որ Կարեն Անդրեասյանից վատ այդ կառույցը ոչ ոք չի ղեկավարել:

- Ըստ Ձեզ՝ ինչպե՞ս ստացվեց, որ Նիկոլ Փաշինյանը հավաքեց ամենաշատ ձայները: Թեպետ նա չունի սահմանադրական մեծամասնություն եւ հավաքել է ընդամենը 49 տոկոս ձայն, սակայն մյուսներն ավելի քիչ ձայներ են հավաքել: Արդա՞ր էին այս ընտրությունները՝ Ձեր կարծիքով:

- Պետք է սպասենք ՍԴ որոշմանը, սակայն, ամեն դեպքում, մենք տեսանք, որ աննախադեպ վարչական ռեսուրս է կիրառվել, քրեական գործերը, որոնք ընտրություններից առաջ հարուցվեցին, անթիվ էին եւ անհամար, դրան էլ գումարած՝ այսքան ձայներ անվավեր ճանաչելը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Այս ամիս աշխատավարձ չենք վճարել, գազի վարձը չենք տվել

Երեկ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը ֆեյսբուքյան իր էջում գրառում էր արել, որով հայտնել էր, որ, ի թիվս այլ ապրանքատեսակների, հունիսի 19-21-ը Հայաստանից արտահանվել է 390 հազար հատ ծաղիկ՝ 7 տոննա:

Մենք կապվեցինք «Ռոզ ֆիլդ» վարդերի ջերմոցային տնտեսության ղեկավար **Համբարձում Վարդանյանի** հետ եւ հետաքրքրվեցինք՝ իրենց վարդերն արտահանվո՞ւմ են, Պապոյանի նշած թվերի մեջ իրենց ջերմոցի ծաղիկները կա՞ն: Նա նշեց, որ իր ջերմոցից ոչ մի հատ ծաղիկ չի արտահանվել. «Տեղյակ չեմ, թե ումից են տարել, երբ են տարել ու որտեղ են տարել: Իրականում, ես էլ եմ նման լուրեր կարդում, բայց հստակ մարդիկ, ում արտադրանքը որ արտահանել են, ես չեմ ճանաչում»:

Հարցին, թե այժմ ինչպես է իրացնում իր ջերմոցի ծաղիկները, Վարդանյանը պատասխանեց. «Մի կերպ, 30 դրամով, 50 դրամով, 60 դրամով փորձում ենք վաճառել, այնքան, ինչքան որ կարողանում ենք, իսկ մնացածը թափում ենք»:

Նրա խոսքով, վաճառքը չի փակում ծախսերը. «Ծախսերի տակից դուրս չենք գալիս, ապրանքը թափում ենք, այս ամիս դեռ աշխատավարձ չենք վճարել, գազի վարձը չենք կարողանում վճարել: Այս պահին մեր արտադրանքը կազմում է 17-18 հազար հատ ծաղիկ, գումարայինով այս ամիս կարող էինք արտահանել մոտ 35-40 մլն դրամի ծաղիկ: Մենք արտադրում ենք 30 տեսակի հոլանդական վարդեր, որոնց տնկիները ներկրում ենք Հոլանդիայից, տեղում ծախս ենք անում մշակելու վրա, ու ինչպե՞ս եք մտածում՝ խելքին մո՞տ է, որ դա հնարավոր լինի նորից Հոլանդիա տանել ու վաճառել»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՌԴ-ԻՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵՑՆՈՒՄ ԵՆՔ, ԱԴՐԲԵՋԱՆԻՑ՝ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ

Հայաստանի «Տելեկոմ Արմենիա»-ն ու Ադրբեջանի «Ազերտելեկոմ»-ը երեկ ստորագրել են համաձայնագիր, ըստ որի՝ ադրբեջանական կողմը կկարողանա, օգտվելով հայկական ենթակառուցվածքներից, ինտերնետ կապ ապահովել Ադրբեջանի հիմնական հատվածի եւ Նախիջեւանի միջեւ: Այս մասին «Թիմ Տելեկոմը» հաղորդագրություն տարածեց: Բնականաբար, այս ինֆորմացիան բուռն քննարկումների ու մտահոգությունների պատճառ դարձավ: Այս պայմանագրի մասին զրուցեցինք տեղեկատվական անվտանգության փորձագետ **Կարեն Վրթանեսյանի** հետ:

- Սա իսկապե՞ս համագործակցության մասին պայմանագիր է, թե՞ մի յուրօրինակ քայլ, որով իրականում ՀՀ ինտերնետ կապն ամբողջությամբ Ադրբեջանի վերահսկողության տակ է դրվում:

- ՀՀ ամբողջ ինտերնետ կապի մասին խոսք չկա, բայց, դատելով «Թիմ Տելեկոմի» հաղորդագրությունից, առնվազն մեծ հավանականություն կա, որ «Թիմ Տելեկոմի» հաճախորդների համացանցային կապի մի մասն ապահովվելու է ադրբեջանական տարածքով եւ ադրբեջանական ընկերության ենթակառուցվածքի հաշվին: Եվ սա անվտանգային ռիսկեր է պարունակում: Եթե նույնիսկ բոլոր փոխանցվող տվյալները շիֆրացիայով լինեն (ինչն այդպես չէ, շատերն առայսօր էլ շարունակում են օգտվել այնպիսի ծրագրերից, որոնք տվյալները բաց են փոխանցում), բայց ադրբեջանական կողմը, վերլուծելով իրենց ենթակառուցվածքով անցնող տեղեկատվական հոսքերը, կարող է շատ դեպքերում դուրս բերել, թե հայկական կողմի հաճախորդն ում հետ կապվեց, երբ ինչ կայք այցելեց կամ ինչ առցանց ծառայությունից օգտվեց եւ այլն:

- Որոշ մասնագետներ նշում են, որ սա Ադրբեջանը Հայաստանից կախման մեջ է գցում, որքանո՞վ են իրատեսական նման մտավախությունները:

- Մերձիշխանական քարոզչամիջոցները զօրուգիշեր մեզ համոզում են, որ մենք պետք է մեր կախվածությունը Ռուսաստանից նվազեցնենք: Միաժամանակ կոնկրետ այս դեպքում որոշակի կախման մեջ ենք հայտնվում Ադրբեջանից, որն անթաքույց ու բազմիցս իր գործերով ապացուցված թշնամի է: Անհիմն լավատեսական մեկնաբանություն է, որ Ադրբեջանը հայտնվում է մեզնից կախվածության մեջ: Վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ Փաշինյանի ռեժիմն ամեն գնով խուսափում է Ադրբեջանին հայելային պատասխաններից: Օրինակ՝ ըստ Ալիեւի հայտարարության, ադրբեջանական ինքնաթիռները միակողմանիորեն, առանց Հայաստանից թույլտվություն ստանալու, հանգիստ հատում են Հայաստանի օդային տարածքը: Այս պնդումը չի հերքվել հայկական կողմից, այսինքն՝ տրամաբանական է համարել, որ այն ճիշտ է: Վստա՞հ ենք, որ Ադրբեջանը ճգնաժամային ինչ-որ իրավիճակում եթե փակի հայկական գործընկերոջ կապը, հայկական գործընկերը նույնկերպ կվարվի Ադրբեջանի հետ: Ես վստահ չեմ:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԹԵՂԱՅՈ

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐՆ ՈՒԶՈՒՄ ԵՆ ՀԱԿԱՍԱՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԸՆԴՈՒՆԵԼ

Խորհրդարանական ընտրությունների արդյունքների թանաքը դեռ չչորացած՝ սահմանադրական մեծամասնություն չստացած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն օրենքի նախագիծ շրջանառեց, որով ցանկանում է արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիներին զրկել ընտրելու իրավունքից, եթե նրանք ընտրություններին նախորդած տարում փաստացի առնվազն 183 օր, այսինքն՝ 6 ամիս չեն ապրել Հայաստանում:

Նախագծի հեղինակներից մեկը՝ ՔՊ-ական պատգամավոր Ալխաս Ղազարյանը, լրագրողների հետ զրույցում չթաքցրեց անգամ, որ առաջարկվող փոփոխությունն ուղիղ կապ ունի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների հետ: Թե հատկապես ինչով է պայմանավորված իշխող ուժի դժգոհությունը, որը հանգեցրել է արտերկրում ապրողների ընտրական իրավունքը սահմանափակելու որոշմանը, պատգամավորն այդպես էլ չհստակեցրեց: Փոխարենը պնդեց՝ նախագիծն իբր միտված է Հայաստանում մշտապես բնակվող քաղաքացու եւ պետության միջեւ կապի պահպանմանը: Առաջարկվող սահմանափակումները չեն վերաբերելու միայն այն քաղաքացիներին, որոնք արտերկրում են գտնվում «հանրային ծառայության կամ կրթություն ստանալու» նպատակով:

Նախագծի հեղինակները հիմնավորման մեջ նշել են՝ քաղաքացիությունը չի կարող լինել միայն ֆորմալ իրավական կապ, այն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ առկա է իրական կապ անձի եւ պետության միջեւ: Պարզ ասած՝ ՔՊ-ականները միայն Հայաստանի անձնագիր ունենալը ընտրությանը մասնակցելու համար բավարար չեն համարում: Կարծում են, որ պետության ապագան պետք է որոշեն նրանք, ովքեր ապրում են Հայաստանում:

Զավեշտն այն է, որ մի կողմից պնդում են, թե քաղաքացիությունը չի կարող լինել միայն ֆորմալ իրավական կապ, մյուս կողմից՝ սահմանափակում են մտցնում ֆիզիկական ներկայության ֆորմալ բացակայության, այն է՝ ընտրություններին նախորդած տարում փաստացի Հայաստանում 183 օր չգտնվելու հիմքով: Ընդդիմադիր եւ փորձագիտական շրջանակներից արձագանքելով ՔՊ-ականների նախագծին՝ ընդգծեցին, որ սա հասարակությանը հերթական անգամ պառակտող ձեռնարկն է իշխանության կողմից, որով փորձում են արտերկրում ապրող հայրենակիցներին զրկել ընտրելու իրավունքից: Նախընտրական փուլում ՔՊ-ականները հատկապես խոսում էին Ռուսաստանից ընտրություններին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանողների մասին՝ պնդելով, թե նրանց նկատմամբ ճնշումներ են գործադրվել, որ ընդդիմության օգտին քվեարկեն:

Մինչդեռ ամենաաբսուրդն այն է, որ այս փոփոխությունը հակասում է մայր օրենքին՝ ՀՀ Սահմանադրությանը, որի 48-րդ հոդվածի 1-ին մասում հստակ գրված է. «Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու եւ հանրաքվեին մասնակցելու իրավունք»: «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր **Մեսրոպ Առաքելյանը**, հղում անելով մայր օրենքի հիշյալ հոդվածին, պնդում է. «Այսինքն, չի կարող որեւէ ձեւով սահմանափակվել ընտրելու իրավունքը, եւ նման նախաձեռնությունը հակասում է Սահմանադրությանը»: Ստացվում է՝ սահմանադրական մեծամասնությունից զրկված իշխանականներն իրականում փորձում են փոխել Սահմանադրությունը, բայց դա անում են Ընտրական օրենսգրքի միջոցով, մինչդեռ անգամ դպրոցականներին հայտնի է, որ Սահմանադրությունը գերակա ուժ ունի մյուս բոլոր օրենքների նկատմամբ, իսկ Սահմանադրության դրույթները կարող են փոխվել միայն համաժողովրդական հանրաքվեի միջոցով:

Սահմանադրական բարեփոխումների խորհրդի անդամ **Դանիել Իոանննիսյանին** երեկ հարցրինք՝ արդյոք Սահմանադրությունը չունի՞ ավելի բարձր իրավաբանական ուժ, եւ դա չի՞ նշանակում, որ ՔՊ-ականների ներկայացրած օրենսդրական առաջարկը չի կարող կյանքի կոչվել, քանի որ այն հակասահմանադրական է: Իոանննիսյանի առաջին արձագանքն այն էր, որ ինքը ՍԴ դատավոր չէ, որ որոշի՝ Սահմանադրությանը համապատասխանող է, թե՝ ոչ: ՔՊ-ականների հեղինակած նախագիծը, Ձեր կարծիքով, չի՞ հակասում Սահմանադրությանը, որը սահմանում է բոլորի ընտրական իրավունքը՝ կրկին պնդեցինք մենք: «Բնականաբար, Սահմանադրությունն ավելի բարձր իրավաբանական ուժ ունի, դա ես պետք է ասեմ, ինձ թվում էր՝ դա գրված է սեւով սպիտակի վրա»: Բայց ՔՊ-ականները կարծես չգիտեն դրա մասին: «Ինչո՞ւ՝ ՔՊ-ականներն ասում են, որ Սահմանադրությունն ավելի բարձր իրավաբանական ուժ չունի՞»: Եթե օրենքի նման նախագիծ են հեղինակել եւ ուզում են այս խորհրդարանում ընդունել, այո, ստացվելու է, որ Սահմանադրության դրույթն անտեսվում է՝ Ընտրական օրենսգրքում Սահմանադրությանը հակասող դրույթ են ուզում մտցնել: «Դե, եթե ինչ-որ մեկը համարում է, որ այս օրենքը հակասում է Սահմանադրությանը, կարող է գնալ Սահմանադրական դատարան»,- ասաց Իոանննիսյանը: Իսկ Դուք համարում եք, որ չի՞ հակասում: «Ես համարում եմ, որ ինքը հակասում է այնքանով, ինչքանով Ընտրական օրենսգրքի ներկայիս կարգավորումները՝ կապված ՏԻՄ-երում քվեարկելու իրավունքի հետ»: Այսի՞նքն: «Ես հիմա այդքան մանրամասնելու ժամանակ չունեմ... ՏԻՄ-երում քվեարկելու իրավունքը նույնքանով է հակասում կամ չի հակասում Սահմանադրությանը, ինչքան այն, ինչ որ համապետական ընտրությունների մասով առաջարկում են ՔՊ-ականները»: Իոանննիսյանին հարցրինք՝ չի՞ ստացվում, որ հիմա Սահմանադրության հոդվածն են փոխում ՔՊ-ականները՝ թաքուն: Զարմանալի պատասխան ստացանք. «Սահմանադրության հոդվածում համապատասխան փոփոխություն երեւի անելու ենք, ընդ որում՝ ավելի ռադիկալ»: Այո, երբ Սահմանադրությունը կփոխեք, նոր տեքստ կգրեք, կբերեք սահմանադրական հանրաքվեի՝ կարող եք ցանկացած բան փոխել: Բայց այս պահին դեռ գործող Սահմանադրությունն է գործում, եւ չի կարելի Ընտրական օրենսգրքում փոփոխություն անել, որը հակասում է Սահմանադրությանը եւ չեղարկում ՀՀ քաղաքացու սահմանադրական իրավունքը:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՀԳ. *Ի դեպ, ՔՊ-ին այսքան վախ պատճառած սփյուռքահայերի ձայներն այնքան շատ չեն, որ որեւէ կերպ ազդեն ընտրությունների վրա: Ամենաստույգ հաշվարկներով, հունիսի 7-ին ընտրություններին մասնակցելու համար Հայաստան է ժամանել հազիվ 10 հազար մարդ: Մինչդեռ եղել է ժամանակ, երբ սփյուռքում տեղամասեր են բացվել, եւ ՀՀ քաղաքացիները քվեարկել են նաեւ արտերկրում:*

«ԳԵԼԱՓԻ» ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԷԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ

«Էմ Փի Ջի» ՍՊԸ՝ «Գելափ Արմենիա» ընկերության ղեկավար Արամ Նավասարդյանը 5 դատական հայց է ներկայացրել դատարան՝ Հայաստանի նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի դեմ: Նա ոչ մի կերպ չի կարողանում հանդուրժել այն, որ Բագրատյանը չի վստահում իր ընկերությանը, նրա այն կարծիքը, թե ընկերությունը սուտ թվեր է հրապարակում ու, առհասարակ, կեղծ «Գելափ» է, որը կապ չունի ամերիկյան հայտնի բրենդի հետ: Hraparak TV-ի եթերում անցյալ տարվա մարտի 30-ին Հրանտ Բագրատյանը հայտարարել էր, թե «Գելափին» «ասում են թվեր, նա սարքում ա, փողը տալիս են, սարքում են»:

Մենք հետաքրքրվեցինք **Հրանտ Բագրատյանից**, թե այս պահին քանի դատ ունի «Գելափ Արմենիայի» հետ, ու ինչ փուլում են դրանք գտնվում: «Նա 5 հայց ունի՝ մեզ հետ կապված: Մեկը, որը կապված է Ձեր թերթի հետ, առաջին ատյանի դատարանը ճանաչել է, որ նա մասամբ իրավացի է, ես նրան պետք է տամ 200 հազար դրամ եւ խոսքս փոխեմ: Այդ դատը մենք բողոքարկել ենք, հիմա վերաքննիչ դատարանում է: Մյուս հայցով ճանաչել են, որ ես եմ իրավացի, եւ այդ դատով նա պետք է մեզ 100 հազար դրամ տա: Եվս 3 գործ սպասում է իր ճակատագրին, քննության փուլում է, ապացույցներ ներկայացնելու»,- ասաց Հրանտ Բագրատյանը:

Վերջին վճիռը, որով «Էմ Փի Ջի» ՍՊԸ-ի հայցը դատարանը մերժել է, կայացվել է հուլիսի 15-ին: Դատարանն արձանագրել է, որ հասարակության շարքային անդամը, լսելով Բագրատյանի հայտարարությունը «Գելափի» մասին, չի զգա, որ այն իրականում հասցեագրված է անմիջականորեն հայցվոր «Էմ Փի Ջի» ՍՊԸ-ին, կամ էլ՝ որ հենց նա է հանդիսացել քննադատության թիրախը: «Էմ Փի Ջի» ՍՊ ընկերության վերաբերյալ քաղվածքն ուսումնասիրելով, դատարանը եզրակացրել է՝ հիմնավորվում է, որ հայցվորն իրավաբանական անձ է, «ուստի նաեւ չի կարող համարվել, որ «Գելափ»-ի ներկայացուցչությունն իրականացնողն է ՀՀ-ում»: Փաստորեն, դատարանի որոշմամբ քանդվեց միֆը, որը տարիներ շարունակ ակտիվորեն տարածվում էր՝ որ «Գելափ Արմենիա»-ն որոշակի կապ ունի սոցհարցումներում մասնագիտացված Gallup Inc՝ «Գելափ ինքորփորեյշն» ամերիկյան ընկերության հետ, վերջնիս ստեղծած ասոցիացիայի ներկայացուցիչն է Հայաստանում:

Դիմելո՞ւ է արդյոք **Արամ Նավասարդյանը** վերաքննիչ, դեռ չգիտի: Խորհուրդ է տալիս այդ հարցով դիմել իր իրավաբաններին եւ առհասարակ խոստանում է հետեւողական լինել եւ դիմել դատարան բոլոր նրանց դեմ, ովքեր, ինչպես ինքն է գտնում, անհիմն մեղադրանքներ կտարածեն իր կամ իր ընկերության հասցեին: «Ի՞նչ եք առաջարկում. կոպալն առնեմ՝ ընկնեմ նրանց հետեւի՞ց: Լուծումը ո՞րն է, ձեր կարծիքով: Ես հստակ հրաման եմ տվել իմ իրավաբաններին, որ ամեն անգամ դիմեն դատարան: Ես Սամվել Կարապետյանին էլ եմ դատի տվել: Ինձ համար կարեւոր չէ, ընդդիմադիր գործիչ է, թե ոչ: Ես չեմ կարող հրապարակել տվյալներ, որոնք բոլորին դուր են գալիս»,- ասաց նա:

Հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, «Գելափ Արմենիան» հանրային տրամադրությունների եւ կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ հարցումներ էր արել եւ ստացել, որ խորհրդարան է անցնելու ոչ թե 3, այլ՝ 5 ուժ, որ ընտրություններին մասնակցելու է ոչ թե ընտրողների 58.9 տոկոսը, այլ՝ 65.4: Ընտրությունների վերջնական պաշտոնական պատկերն էապես տարբերվեց նախապես նրանց նկարագրածից: ԲՀԿ-ն ոչ թե 8,8 տոկոս հավաքեց, ինչպես կանխատեսում էր «Գելափ Արմենիան», այլ՝ 3.98, «Միասնության թեւերը»՝ ոչ թե 6,2, այլ՝ 2.29, «Հայաստան» դաշինքը՝ ոչ թե 15,2, այլ՝ 9,92, «Ուժեղ Հայաստանն» էլ՝ ոչ թե 16,4, այլ՝ 23,27: Ահա այսպիսի խիստ էական տարբերություններ ունեցանք սոցհարցումների եւ վերջնական արդյունքների միջեւ:

«Գելափ Արմենիայի» թվերը ճիշտ են, թե սուտ, դատեք ինքներդ, չնայած պետք է հաշվի առնել, որ ոչ մի «Գելափ» չէր կարող հաշվարկել կեղծումների, ԿԸՀ ապօրինի որոշումների ազդեցությունն ընտրությունների արդյունքների վրա, ինչպես նաեւ՝ ՔՊ-ի կողմից ահռելի վարչական ռեսուրսի ներգրավումը, քրեական պատժամիջոցների ու կալանավորումների ազդեցությունը: Հենց այս պատճառներն էլ նշեց Ա. Նավասարդյանը մեզ հետ զրույցում:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՉԵՄ ԲԱՑԱՌՈՒՄ, ՈՐ ՍԴ-Ն ԿԱՅԱՑՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*«Հրապարակի» զրուցակիցն իրավագիտության դոկտոր, արդարադատության նախկին նախարար, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ **Գեւորգ Դանիելյանն** է:*

- Հայաստանի քաղաքական նորագույն պատմության մեջ աննախադեպ իրավիճակ է ստեղծվել. միանգամից 7 ուժ, այն էլ՝ հակադիր բեւեռներում գտնվող, համարում են ընտրությունները կեղծված եւ դիմել են ՍԴ՝ հունիսի 7-ի ԱԺ ընտրությունների արդյունքները վիճարկելով: Կարո՞ղ ենք ասել, որ սա սովորական հետընտրական վեճ չէ:

- Ցավոք, այս ընտրություններով մենք գերազանցեցինք եւս մի անթույլատրելի նշաձող, ինչի նախադեպերին հնարավոր է հանդիպել միայն ժողովրդավարության հետ լրջագույն աղերսներ ունեցող սակավաթիվ երկրներում: Այս ընտրական գործընթացները, ցավոք, միանգամայն սպասելի էին, իրավաքաղաքական գործելաոճը նույնն է՝ նախաձեռնում եք աննախադեպ զանգվածային խախտումներ, հատկապես՝ վարչական ռեսուրսների գերչարաշահման առումով, հընթացս ստանալով հավաքական Արեւմուտքի եւ թուրք-ադրբեջանական ուժերի անվերապահ աջակցությունը, միաժամանակ ընտրական տարաբնույթ զեղծարարությունների մեջ ոչ միայն մեղադրում եք ընդդիմադիր ուժերին, այլեւ դիմում եք համակարգված քրեական անհիմն հետապնդումների: Նույն գործելաոճն է նաեւ հետընտրական շրջանում, ինչը միտված է հապճեպ կանխելու համարժեք ցանկացած իրավաչափ արձագանք: Թերեւս, այս ամենը թույլ չի տալիս առանձնացնելու առանցքային հարցադրումը՝ արդյո՞ք գործ ունենք դասական իմաստով ընտրական գործընթացի հետ, երբ հարկ է լինում կողմնորոշվել քաղաքական ուժերի միջեւ, թե՞ կանխորոշում ենք մեր երկրի աշխարհաքաղաքական ուղղվածությունը՝ դրանից բխող անդառնալի ծանր հետեւանքներով հանդերձ: Ներքին լսարանը հեղեղված է անհարկի ուշադրություն գրավող տարաբնույթ իրավիճակային դրվագներով, ինչը թույլ չի տալիս կենտրոնանալ եւ սթափ ընկալել այս ծայրահեղ իրավիճակը: Մենք անորոշ դիրքորոշումներով վանում ենք ԵԱՏՄ-ին, սակայն փոխարենը հստակ չունենք երկրի ինքնիշխանությունը եւ ինքնաբավությունը երաշխավորելու, մարդկանց սոցիալ-տնտեսական կարիքները բավարարելու տարրական երկընտրանք: ՍԴ դիմող կուսակցությունների մեծ քանակն ինքնին անսովոր հետընտրական վիճակի ցուցիչ չէ, սակայն համամիտ եմ Ձեզ հետ, որ խոսքը տվյալ դեպքում միմյանց նկատմամբ գրեթե հակադիր կեցվածք ունեցող կուսակցությունների մասին է: Թե ինչու են լուռ մյուս կուսակցությունները, դա եւս խոսուն է, մեր հանրությունը վերջապես պետք է հետեւություններ անի, քանզի հետընտրական գործունեությունը եւս կարեւոր բնութագրիչ է:

- Նախկինում եւս ընտրությունների արդյունքները վիճարկվել են՝ 1996, 2003, 2008, 2013 եւ 2021 թվականներին: Սակայն նախաձեռնությունը, որպես կանոն, մեկ թեկնածուի, մեկ ընդդիմադիր ուժի կողմից էր: Ինչի՞ մասին է սա վկայում, ընտրական գործընթացի նկատմամբ համակարգային անվստահության:

- Որքան էլ փորձեն պարզունակ հնարքներով, բայց խիստ հետեւողականորեն ամբողջովին սեւացնել նախկինում տեղի ունեցած ընտրական գործընթացները, վերջապես՝ ոչ թե վերացական խոսքով, այլ կոնկրետ գործով հարկ էր առաջընթաց արձանագրել, մինչդեռ բացահայտ տեղի է ունենում նախկին արատավոր պրակտիկան անհամեմատ մեծ չափերով վատթարացնելու կայուն գործընթաց: Անշուշտ, շատերն են հիշում, որ 2003թ. ՍԴ-ն, համարժեք գնահատելով հետընտրական լարված վիճակը, անվստահության նկատելի դրսեւորումները, իր որոշմամբ առաջադրեց հանրաքվե անցկացնելու անհրաժեշտություն, ինչը նախատեսված չէր Սահմանադրությամբ, սակայն սահմանադրական կարգը երաշխավորելու հիմնավոր միջոց էր գնահատվել, ինչն ինքնին ողջունելի էր: Այս որոշումը խիստ տարաձայնությունների տեղիք տվեց, բայց տասնյակ տարիների խորքից դրա վերլուծությունը, թերեւս, ցույց է տալիս, որ այն միանգամայն անհրաժեշտ քայլ էր: Ընտրական գործընթացների նկատմամբ համակարգային վստահության նկատելի պակասին նախկինում անհամեմատ մեծ չափով նպաստում էին տարաբնույթ արտաքին միջամտությունները, որոնք, բառի բուն իմաստով, սնում էին նաեւ երկրի ներսում պատվերներ կատարելու պատրաստ հասարակական ուժերի եւ անհատների: Բնորոշ է այն, որ ամենաչնչին խախտումները լրջագույն արձագանքի էին արժանանում, մինչդեռ ներկայում դրսեւորում են կույր ու լուռ մնալու խայտառակ գործելաոճ:

- Իսկ որքանո՞վ է հեռանկարային երկրի բարձրագույն սահմանադրական ատյանին դիմելը, երբ հայտնի են դրա կազմը, դրա ուղիղ կախվածությունը գործող ռեժիմից: Արդյո՞ք կռահելի չէ ՍԴ-ի որոշումը, որը հարցը քննարկելու է հունիսի 26-ի նիստում: Այսինքն՝ իշխանությունների «գործիք» հանդիսացող ՍԴ-ն օրինական կհամարի ընտրությունների արդյունքները:

- Հետաքրքիր հարց եք բարձրացնում: Մենք հաճախ ենք լսում դիտողություններ՝ մի՞թե արդյունք եք ակնկալում, որ դիմում եք այս կամ այն ատյանին: Եթե արդյունքը համարում ենք հիմնավորված դիմումը բավարարելը, ապա այդպիսի ակնկալիք ունենալը միամտություն է, բայց ողջ խնդիրն այն է, որ վիճարկելը ոչ միայն զուտ իրավական, այլեւ քաղաքական կարեւոր քայլ է: Յուրաքանչյուր քաղաքական ուժ նաեւ այդպես է բացահայտում իր իրական դիրքորոշումը, նպաստում է մարդկանց իրավական ինքնագիտակցության առողջացմանը, հանրային սթափ ու ճշգրիտ իրավաքաղաքական մշակույթի ձեւավորմանը՝ հիմքեր ստեղծելով հետագա քաղաքական գործընթացների համար: Թերեւս, հենց այս առումով էի նախորդիվ անդրադարձել ընտրությունների արդյունքների հետ հաշտ մյուս քաղաքական ուժերին: Այդ հարթակներում կարեւոր իրավական հարցադրումների քննարկումն առավել տեսանելի է դարձնում նաեւ այն, թե ինչ չափով են համապատասխանում դատական իշխանության անկախության վերաբերյալ իշխանական թեզերը, որքանով են իրատեսական ոչ միայն իշխանությունների բաժանման, այլեւ դրանց հակակշռման լծակները: Կոնկրետ այս իրավիճակում չեմ բացառում, որ ՍԴ-ն կայացնի դիմումը մասնակի բավարարելու որոշում, բայց նպատակահարմար չեմ գտնում խոսել դրա մասին:

- Փաշինյանն օրերս հայտարարեց, որ եթե խորհրդարան անցած ընդդիմադիր ուժերը չվերցնեն մանդատները, ապա իշխող թիմը դիմելու է ՍԴ, որպեսզի մանդատներն անցնեն այլ ուժերի: Ակնարկեց՝ դրանով իսկ ԱԺ-ն կունենա բացարձակ լեգիտիմ կազմ: Այս ապօրինություններն ինչ հանգրվանի կբերեն հետընտրական Հայաստանին, ճգնաժամի նախանշաններ չկա՞ն:

- Մենք դարձյալ վերադարձանք այն խնդրին, թե որքանով է կայացած դատական իշխանությունը, ցավոք, այդ հայտարարությունից մեկ անգամ եւս ուղղակի բխում է, որ ՍԴ որոշումները կանխատեսելի են իշխանության պարագայում, թեպետ՝ այդպիսի դիմումն ընդհանուր աղերսներ չունի Սահմանադրության հետ: Դա նաեւ գործնական առումով անհեռանկար քայլ է, քանզի խորհրդարան անցած քաղաքական ուժերն այդպիսի զարգացումներն ինչ-որ մի փուլում կարող են հանգիստ կանխարգելել, ինչին եւս չարժե առայժմ անդրադառնալ: Բոլոր դեպքերում ողջունելի է, որ ընդդիմադիր քաղաքական ուժերը չեն տրվում սադրանքների եւ նախընտրում են բացառապես իրավաչափ միջոցները:

Արա ԱԼՈՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՔՈՉԱՐՅԱՆԸ ԿԴԻՄԻ ՎԵՐԱՔՆՆԻՉ՝ ԸՆԴԴԵՄ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ

2025-ի հոկտեմբերին Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի որդին՝ Սեդրակ Քոչարյանը, Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմում էր ներկայացրել՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության, հանձին Գլխավոր դատախազության: Ս. Քոչարյանը պահանջում էր ճանաչել իր անմեղության կանխավարկածի խախտումը դատախազության կողմից եւ փոխհատուցել ոչ նյութական վնասը՝ 2 մլն դրամի չափով:

Դատարանը՝ դատավոր Նելլի Հարությունյանի նախագահությամբ, 2026 թ. հունիսի 17-ին ամբողջությամբ մերժել է Ս. Քոչարյանի հայցը: Վերջինիս պաշտպան **Հայկ Ալումյանն** ասաց՝ այսօր են ստացել դատարանի որոշումը, դեռեւս չի ծանոթացել դատարանի հիմնավորումներին, ապա հավելեց՝ բողոքարկելու են վերաքննիչ դատարան. «Միանշանակ, բողոքարկվելու է ոչ միայն ներպետական ատյաններում, այլ հասկանալով ներպետական ատյանների հետ կապված խնդիրները, նաեւ պլանավորում ենք մինչեւ Եվրոպական դատարան այս հարցը հասցնել»: Հայկ Ալումյանը նախկինում ներկայացրել է հայցադիմումի հիմքերը, նշել է, թե ինչպես է դատախազությունը խախտել իր վստահորդի անմեղության կանխավարկածը. «Սեդրակ Քոչարյանին մեղադրանք է առաջադրված, եւ գործը գտնվում է դատարանում: Սեդրակ Քոչարյանն ի սկզբանե պնդել է, որ այդ գործողությունները չի կատարել: Այն ընթացքում, երբ գործը նախաքննական մարմնից ուղարկվել է դատարան՝ քննության համար, դատախազը, որն այս գործով մեղադրողն է դատարանում, իսկ նախաքննության ժամանակ հսկող դատախազն էր, հարցազրույց է տվել Հայաստանի առաջին հեռուստաալիքին եւ, որպես հաստատված հանգամանք, պնդել է, որ Սեդրակ Քոչարյանը կատարել է այդ հանցագործությունները: Ոչ թե ասել է՝ մենք իրեն մեղադրում ենք այսինչ կամ այնինչ բանում, այլ հաստատված փաստ ներկայացրել է այն, ինչի վերաբերյալ դեռ դատավարություն պիտի ընթանա, դեռ դատարանը պիտի դատավճիռ կայացնի՝ արդարացման կամ մեղադրական»:

Նշենք, որ Ս. Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ հանդիսանալով «ԼԼ Բիմբո» ՍՊԸ-ի համահիմնադիր եւ հնարավորություն ունենալով կանխորոշելու դրա գործադիր տնօրենի որոշումները, միջոցներ տրամադրելու եւ խոչընդոտներ վերացնելու եղանակով օժանդակել է իր հետ փոխկապակցված անձ Սերժ Սարգսյանին օրենքով նախատեսված արգելքին հակառակ ձեռնարկատիրական գործունեությանը մասնակցելուն եւ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալուն: Ըստ մեղադրանքի՝ դրանից հետո, նպատակ ունենալով քողարկելու առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու արդյունքում հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հանցավոր ծագումը... ծագման աղբյուրը, տնօրինման եղանակը, իրական իրավունքներն ու պատկանելությունը՝ գույքին օրինական տեսք տալու նպատակով, Ս. Քոչարյանն այն օրինականացրել է մի շարք բանկային փոխանցումների, տնօրինելու եւ այդ եկամուտները գույքի ձեռքբերմանն ուղղելու եղանակով: Մեղադրանք է առաջադրվել նաեւ «ԼԼ Բիմբո» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն Ալեքսան Որսկանյանին: Քրգործը դատարան է ուղարկվել 2025թ. հունիսի 6-ին եւ դատաքննության փուլում է:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՄԵՐՈՒՆԴ

ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ՁԵՎ ԹԱՓԵԼ ԵՎ ՉՏԵՍՆԵԼՈՒ ՏԱԼ ՆՈՐ ՍՏԵՂԾՎՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հա մի հատված երկրի գլխավոր դատախազի կողմից հաստատված մեղադրական եզրակացությունից, որը ներկայացվել է երկրի պաշտոնանկ արված ղեկավարին. «Մեղադրվում է հանցավոր խմբավորում ստեղծելու, պետական իշխանության ապօրինի զավթման, պահպանման եւ դրա ընձեռած հնարավորությունների չարաշահման մեջ: Իշխանությունը բռնազավթելուց հետո իր պաշտոնեական լիազորություններն օգտագործել է ոչ թե ի շահ պետության եւ նրա քաղաքացիների բարօրության, այլ պետական ապարատի նկատմամբ անձնական վերահսկողություն սահմանելու համար: Իր ստեղծած հանցավոր խմբավորման մեջ ներգրավել է իրեն անձնապես մոտ եւ առավել նվիրված անձանց, ովքեր զբաղեցրել են առանցքային պաշտոններ խորհրդարանում, կառավարությունում, նախարարություններում, ուժային կառույցներում, դատական իշխանությունում, տեղական ինքնակառավարման մարմիններում եւ այլ պետական կառավարման մարմիններում: Հանցավոր խմբավորումը գործունեություն է ծավալել երկրի բոլոր մարզերում, քաղաքներում, տնտեսական գործունեության հնարավոր բոլոր ճյուղերում: Փորձել է ստեղծել օրինականության երեւութականություն, սակայն նրա գործունեության իրական նպատակը եղել է սեփական իշխանության ամրապնդումը, տնտեսական օգուտի ստացումը եւ գործած ծանր հանցագործությունների պարտակումը»:

Ձեզ մոտ ինչ-որ զուգահեռներ չ՞են առաջանում, ձեզ չ՞ թվում, որ նման մեղադրական եզրակացություն կարող է ներկայացվել ձեզ հայտնի որեւէ անձի: Չնայած մեր ներկայացրած մեղադրական եզրակացությունը չափազանց մեղմ է, որպեսզի համապատասխանի նրան, որը կարող է ուղղվել Նիկոլ Փաշինյանին, սակայն որոշ նմանություններ, այնուամենայնիվ, կան: Վերը նշված մեջբերումը վերցված է Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչի մեղադրական եզրակացությունից, որը հաստատել է այդ երկրի ներկայիս գործող գլխավոր դատախազը: Յանուկովիչի օրոք երկիրը տարածքային կորուստներ չի ունեցել, հարյուր հազարավոր, գուցե միլիոնավոր մարդիկ չեն սպանվել, եւ ընտրություններ էլ չեն կեղծվել: Բայց, զրկված լինելով իշխանությունից, նա մեղադրվում է մի իշխանության կողմից, որը երկիրը հասցրել է կոլապսի, երկրի տարածքի մի զգալի մասը կորսված է, տասնյակ քաղաքներ, հազարավոր գյուղեր ավերված են, միլիոնավոր մարդիկ փախստական են, երկրի տնտեսությունն ու ենթակառուցվածքները չեն գործում կամ գործում են կիսատ:

Հիմա նույն իրավիճակը Հայաստանում է. մի իշխանություն, որ ինքն է երկիրը հասցրել կոլապսի, անկախ, ինքնիշխան երկիրը վասալային կախվածության մեջ է գցել Ադրբեջանից եւ Թուրքիայից, մեղադրանք է ներկայացնում այն ղեկավարներին, որոնց օրոք Հայաստանի ինքնիշխանությունը մի քանի աստիճան ավելի բարձր է եղել, քան հիմա, Հայաստանն ադրբեջանական վասալ չի եղել: Հայաստանում ստեղծվել է նոր իրավիճակ. փաստացի, կեղծելով ընտրությունները, Փաշինյանն իրեն հայտարարել է իշխանության միակ սեփականատեր, միակ եւ հավերժ, կարելի է ասել՝ ցմահ: Այլեւս պարզ է, որ քանի դեռ նա իշխանություն ունի, ընտրությունները, կարեւոր չէ անգամ՝ համապետական են, թե տեղական նշանակության, կրելու են ձեւական բնույթ, որովհետեւ բռնապետը թույլ չի տալու, որ ընտրողների՝ հասարակ քաղաքացիների կամքն ավելի բարձր լինի, քան իր որոշումը: Պատահական չէ, որ համապետական ընտրությունները կեղծելուց անմիջապես հետո նա հայտարարում է Գյումրիում նոր ընտրություններ անցկացնելու անհրաժեշտության մասին՝ Գյումրին Հայաստանում միակ տեղն է, որտեղ դեռ կա հանրության կողմից ընտրված եւ ոչ թե բռնապետի կողմից նշանակված տեղական իշխանություն: Գյումրիում կազմակերպվելիք ընտրությունները լինելու են նոր չափանիշներով, դրանց մասնակցելու իրավունք տրվելու է միայն բռնապետի կողմից հավանության արժանացած, այսպես կոչված, կուսակցություններին, մնացած բոլորը հռչակվելու են ոչ ցանկալի, եւ նրանց մասնակցությունն արգելվելու է: Բռնապետը ցույց է տալու, որ մյուս կուսակցությունների գոյությունն անօրինական է եւ անիմաստ, եթե նրանք զրկված են քաղաքական պրոցեսին մասնակցելու իրավունքից: Երբ չկա իրական այլընտրանք, իմաստ չի ունենա նաեւ ընտրություն կեղծելը:

Պետական կառավարման համակարգը, հատկապես՝ ուժային կառույցները, ինչպես Յանուկովիչի մեղադրանքում է, վերածվում են հանցավոր խմբավորման, որի անդամներն ընտրվում են բացառապես անձնական հավատարմության եւ նվիրվածության սկզբունքով եւ ծառայում են բռնապետի իշխանության պահպանմանը: Բռնապետն այլեւս կարիք չունի սիրաշահել հասարակությանը կամ աշխատել հանրային կարծիքի վրա, հանրության վրա ներազդելու նրա միակ գործիքը դառնում են բռնությունը եւ ահաբեկումը: Հայաստանից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիներին ընտրական եւ այլ քաղաքացիական իրավունքներից զրկելու ցանկությունը եւս բացատրվում է դրանով, նրանք ենթակա չեն ռեժիմի ներազդմանը, հետեւապես՝ վտանգավոր են ռեժիմի համար:

Մենք չենք կարող ձեւ թափել եւ չտեսնելու տալ նոր ստեղծվող եւ ձեւավորվող իրավիճակը, մտածել, որ ամեն ինչ լինելու կամ մնալու է այնպես, ինչպես եղել է մինչեւ հունիսի 7-ը: Ընդհակառակը՝ նոր իրավիճակի ընկալումը նպաստելու է դրա պայմաններում պայքարելու հնարավորությանը: Բռնապետությունները միշտ էլ տապալվում են, բարեբախտաբար, հավերժ բռնապետեր չկան, դրանք տապալվում են ներքին դիմադրության եւ շատ հաճախ արտաքին նպաստավոր պայմանների արդյունքում, երբ բռնապետերը կորցնում են իրենց արտաքին աջակցությունը, կամ բռնապետության դեմ պայքարող հասարակություններն են ստանում արտաքին աջակցություն:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԿԸՀ ԿԱՅՔԸ ԿԱԽԵՑ, ՀԻՄԱ ՍԴ ԿԱՅՔԸ ԿԱԽԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է

ՍԴ-Փաշինյան հետաքրքիր մենամարտ է սպասվում մեզ: Մոռացեք ֆուտբոլի աշխարհի առաջնությունը, որտեղ Հայաստանի հավաքականը նույնիսկ չի խաղում: Հունիսի 26-ին Երեւանի վրա է կենտրոնանալու ողջ հայության ուշադրությունը: Այդ օրը որոշվելու է՝ կավարտի՞, արդյոք, Փաշինյանն իր տխրահռչակ քաղաքական կարիերան, թե՞ կառավարման եւս մեկ «տրանշ» կստանա՝ երկիրը վերջնականապես կազմաքանդելու համար:

Երկուսի դրությունն էլ լուրջ է՝ թե՛ Փաշինյանի եւ թե՛ երկրի: Ով կհաղթի՝ կախված է Սահմանադրական դատարանի մարզավիճակից: Իսկ ինչ վերաբերում է Փաշինյանին, ապա նա միշտ է լավ մարզավիճակում, պարզապես այս մրցավեճից առաջ ՍԴ-ի դիրքերը բավականին նախընտրելի են, ավելի նախընտրելի, քան 21 թվականին: Տեսնենք՝ կկարողանամ Փաշինյանը (հազիվ թե անձամբ ներկայանա դատին) ցրել ՍԴ-ի հաղթանակի պատրանքները՝ 0-ի բերելով բոլոր այն ընտրախախտումները, որոնք այս պահի դրությամբ պարկերով լցված են ՍԴ դատավորների աշխատասենյակներում: Մեկը չէ, երկուսը չէ… Բազմաթիվ կուսակցություններ ու դաշինքներ 80, 60, 50 էջանոց բողոքներ են գրել, որոնց եթե կեսն էլ բավարարվի, Նիկոլ Փաշինյանը կարող է հայտարարվել 21-րդ դարի մեծագույն ընտրակեղծարար, իսկ դրա համար, եկեք չմոռանանք, լուրջ «սռոկ» է հասնում: Այնպես որ, Փաշինյանն այս անգամ շատ պետք է աշխատի, որ պլստա արդարադատությունից:

Ասում են՝ որքան մեծ է սուտը, այնքան շատ են դրան հավատացողները: Փաշինյանն արդեն հասցրել է այդ մեծ սուտը փոխանցել հանրությանը: Դա տեղի ունեցավ հունիսի 7-ի լույս 8-ի գիշերը՝ բոլորիս քաջ հայտնի իրավիճակում, երբ դեռ տեղամասերի 10 տոկոսի արդյունքներն անգամ պարզ չէին: ԿԸՀ-ի «վազող տողի» վրա մեխված էր 54 ու եսիմքանի տոկոս ցուցանիշը, իսկ Նիկոլը դա ներկայացնում էր որպես մե հաղթանակ, մե բան… ԿԸՀ-ի կայքը Նիկոլի այդ ստից պարզապես «կախեց»: Տո լի Հովակիմյանը սխալ «կնոպկա» սեղմեց, տո լի արհեստական բանականությունը շշկռվեց… Ո՞վ կարող է ասել: Ամեն ինչ դրանից հետո կորավ Վրաստանի վարչապետ Կոբախիձեի շնորհավորական հեռագրի եւ անքուն մնացած լրագրողների հետ ասուլիսի աղմուկի մեջ: Բայց սալյուտ չտվեցին: Մարդիկ, որ նշանակված էին սալյուտի պատասխանատու, ասուլիսի ժամանակ սգվորի տեսքով կանգնած էին Փաշինյանի թիկունքում ու հազիվ կակազում էին՝ «Նի-կոլ՝ վարչապետ»: Ալենն էր, Պապիկյանն էր, Ռոմանոսն էր, Արայիկ Հարությունյանն էր, Միրզոյան Արոն էր… Երեսներից ք.ք էր թափվում… Երեւի արդեն կանխազգում էին խայտառակ պարտության համը… Փաշինյանի դեմքն էլ մի բան չէր, բայց նա կարողանում էր պահել ինքնատիրապետումը… Դրսից լրագրողներ կային, ի վերջո:

Հունիսի 8-ի առավոտյան, երբ խորհրդարան անցած ԲՀԿ-ի թիվը «կտրուկ» իջավ, շշուկներ տարածվեցին, որ այս ընտրություններում մի բան այն չէ: Այստեղ արդեն իրեն կորցնելու հերթը հասավ ԿԸՀ-ին, իսկ ավելի ստույգ՝ Վահագն Հովակիմյանին: Մեկ որոշեցին վերահաշվարկ անել, մեկ ասացին՝ ԲՀԿ-ն անցել է, մեկ ասացին՝ չի անցել… Վերջը որոշեցին 2 ընտրատեղամասի արդյունքները չեղյալ հայտարարել ու ԲՀԿ-ի հարցը «լոմով» փակել: ԲՀԿ-ն բողոքեց, դատարանն ասաց՝ պետք է վերահաշվարկ անել, իսկ Հովակիմյանը մնաց անհողդողդ: Բայց ո՞վ էր նրան հրահանգավորում, որ մի հատ էլ անհողդողդ չմնար…

Այստեղից բնական հարցեր առաջացան ընտրությունների մասնակից մյուս ուժերի մեջ, որ եթե ԲՀԿ-ի հետ կապված այդպիսի խայտառակ ցուցանիշներ կան, ապա ինչ՞ եր կարող են արած լինել իրենց ցուցանիշների հետ: Առանցքային ընդդիմադիր ուժերը կարծիք հայտնեցին, որ պետք է բացել բոլոր տեղամասերը՝ հասկանալու իրական պատկերը: Փաշինյանը դրանից զգուշացավ եւ շրջանառության մեջ դրեց ընտրակաշառքների թեման՝ ընդդիմությանը մեղադրելով համատարած ընտրակաշառք բաժանելու մեջ: Ընդդիմությունը հակադարձեց՝ դու ես կաշառք բաժանել՝ թոշակների, անվճար բուժօգնությունների, պետական աշխատողների պարգեւավճարների եւ այլ ձեւերով: Ասին՝ վախեցրել ես մարդկանց, սպառնացել, եւ այս բոլորը փաստագրված է, էլ չասած՝ անճշտությունները, որոնք հազարներով են՝ սկսած ստորագրությունների կտրոնների թվի տարբերությունից, վերջացրած գաղտնի ցուցակներով ու անհայտ ծագման ընտրողներով, որոնք քվեարկել են որ ժամին պատահի: Խոսքն արդեն 100 հազարավոր ձայների մասին է, որ այսուայնկողմ են արել եւ նույնիսկ դրանից հետո չեն կարողացել մոտենալ իրենց 54 տոկոսին:

ՍԴ-ն, իհարկե, կտեսնի այս ամենը: Ընդդիմության փաստաբաններն այն մարդիկ չեն, որ ՍԴ-ին թույլ տան չտեսնելու տալ խայտառակ փաստերն ու կանաչ լույս վառել Նիկոլ Փաշինյանի ոչ այն է՝ երկրորդ, ոչ այն է՝ երրորդ սռոկի առաջ: Ես մի ուրիշ բանից եմ վախենում: ՍԴ-ն հանկարծ այնքան չզայրանա, որ Նիկոլին ու ՔՊ-ին ընդհանրապես արգելի մասնակցել նոր ընտրություններին: Այդպիսի որոշում որ եղավ, ինչ է՝ դատախազը դիմելու է ԿԸՀ-ին, որ անձեռնմխելիությունից զրկեն համ Նիկոլ Փաշինյանին, համ Վահագն Հովակիմյանին՝ առերեւույթ հանցագործության մեջ ներգրավված լինելու հիմքո՞վ:

ՀԳ. *ՍԴ-Փաշինյան մենամարտից առաջ ընդունվում են խաղադրույքներ: ՍԴ-ի հաղթանակը գնահատվում է 5 գործակցով, Նիկոլինը՝ 0,2: Ասել է թե՝ տոտալիզատորն ավելի շատ հավատում է Նիկոլի հաղթանակին: ՍԴ-ի հաղթանակի վրա, սակայն, խաղադրույք է կատարել մոտ 540 հազար ընդդիմադիր ընտրող՝ ներառյալ խորհրդարան անցած ԲՀԿ-ի 60 հազարը: ՍԴ, դու պետք է հաղթես, որ մեր երկրում վերջնականապես չմեռնի արդարությունը:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՆ-Ն ԶՐՊԱՐՏՈՒՄ Է, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄ, ՀՀ ԱԳՆ-Ն՝ ԼՌՈՒՄ

ԽՈՍՔ

Մինչ Նիկոլ Փաշինյանը նախկիններով է վախեցնում եւ մեղադրում ընդդիմությանը, թե ստում են 300 հազար «ադրբեջանցի փախստականների»՝ Հայաստան գալու վտանգի մասին խոսելով, Ադրբեջանում, այսպես կոչված, «ադրբեջանցի փախստականների» թեման համառորեն ու հետեւողականորեն միջազգային օրակարգ են մղում: Իրեն կրքոտ հռետոր հռչակած Փաշինյանը, որ հուր ու կրակ է թափում հայաստանյան ընդդիմության գլխին, սպառնում ջախջախել, ոչնչացնել, բոմժ սարքել, սակայն, չգիտես ինչու եւ որ գաղտնի ուժերի ճնշման տակ, մատ թափ չի տալիս, օրինակ, ադրբեջանական ԱԳՆ-ի ուղղությամբ, որն իր տարածած հաղորդագրության մեջ նշում է ոչ թե 300 հազար ադրբեջանցի պսեւդո փախստականների, այլ մեկ միլիոնի մասին:

Ադրբեջանական http://day.az/-ի փոխանցմամբ, փախստականների միջազգային օրվա առթիվ Ադրբեջանի ԱԳՆ-ի տարածած հաղորդագրությունում ասվում է, որ իրենց համար առանձնահատուկ նշանակություն ունի փախստականների հարցը, քանի որ էլ ով, եթե ոչ իրենք, լավ գիտեն, թե ինչ է նշանակում հայրենիքը, սեփական տները կորցնելն ու վտարվելը: Անտեղյակ մարդը կարող է կարծել, թե ադրբեջանական իշխանության խիղճն ու մարդկայնությունն են արթնացել, եւ խոսքը գնում է Արցախի, Ադրբեջանի տարբեր շրջաններից վտարված հայերի մասին, որոնք հարյուրամյակներ ապրել են այդ տարածքում, այժմ գեթ մեկ հայ չկա այստեղ:

Բայց Ադրբեջանի ԱԳՆ-ն նկատի ունի ադրբեջանցիներին, այլ ոչ թե հայերին. «Ադրբեջանի համար բռնագաղթը հատուկ նշանակություն ունի, քանի որ ադրբեջանական տարածքների օկուպացիան եւ զավթումը պատճառ դարձան, որ մեկ միլիոնից ավելի ադրբեջանցիներ դարձան փախստական եւ ներքին տեղահանված մարդիկ: Տասնյակ տարիներ նրանք ստիպված էին իրենց հարազատ վայրերից հեռու ապրել ու զրկանքներ կրել: Այդ մարդկանց իրավունքները կոպտագույն ձեւով խախտվել են, իսկ նրանց տները, բնակավայրերը, մշակույթի հուշարձաններն ու օբյեկտները ոչնչացվել են»:

Ադրբեջանի ԱԳՆ-ն նման լալահառաչ տեքստով, փաստորեն, սեփական ցեղասպանական գործողությունները վերագրում է Հայաստանի Հանրապետությանն ու հայերին եւ դա տարածում միջազգային մակարդակով՝ լռելով այն մասին, որ եթե անգամ Խորհրդային Հայաստանում ապրող 100-130 հազար ադրբեջանցիներ հեռացել են Հայաստանից, ապա դա բացառապես խաղաղ ու կամովին է եղել՝ տները վաճառելով, ողջ գույքը տեղափոխելով: Եվ դա հաջորդել է Սումգայիթի ու Բաքվի ջարդերին, երբ հայերին կենդանի խողխողում էին, եւ Հայաստանում ապրող ադրբեջանցիներն էլ մտավախություն ունեին, որ այստեղ իրենց կպատժեն իրենց հայրենակիցների իրականացրած վայրագությունների համար:

Իսկ Հայաստանի ԱԳՆ-ն, վարչապետը լռում են՝ փաստացի հաստատելով, որ ՀՀ ներկայիս իշխանությունները համաձայն են ադրբեջանական կողմից հնչող այս անամոթ ու անմարդկային զրպարտության հետ: Ադրբեջանական ԱԳՆ-ն շեշտում է, որ Արցախում ադրբեջանցիների բնակեցման ծրագիրն են ակտիվորեն առաջ տանում, եւ գործում է «մեծ վերադարձի» ծրագիր, որով բոլոր փախստականները կվերադառնան «հայրենիք»: Բայց հայրենիք ասելով Արցախը նկատի չունեն՝ որպես հայերի հայրենիք, կամ Կիրովաբադը, Գետաշենը, Բաքուն, որտեղ հարյուր հազարներով հայեր են ապրել, այլ նկատի ունեն հայկական Մասիսը, Երեւանը, Գեղարքունիքը, որտեղ՝ Սովետական Միության տարիներին ինչ-որ քանակի ադրբեջանցիներ են ապրել:

Ադրբեջանի ԱԳՆ-ի հայտարարության մեջ ասվում է, որ իրենք հետեւողականորեն հասնելու են փախստականների իրավունքների վերականգնմանը: Մինչդեռ Հայաստանում եղել են ոչխարապահ եւ իրենց հոտն արածեցնող ադրբեջանցիներ, որոնց թիվը, ամենակոպիտ հաշվարկներով, անգամ չի անցել 150 հազարը: Եվ այս ցինիզմը բխում է նրանից, որ Փաշինյանը, ի պատասխան Ադրբեջանի ագրեսիայի, վախենում է հակադարձել, որ Ադրբեջանն էթնիկ զտում է իրականացրել, որ 500 հազար հայ է բռնագաղթել, ոմանք մորթվել ու ունեզրկվել են Ադրբեջանի կողմից, եւ դա եղել է մինչեւ արցախյան հակամարտությունը: Որ Ադրբեջանի գործողությունները կարելի է բնորոշել որպես մարդկության դեմ հանցագործություն: Սակայն Փաշինյանի «խաղաղության օրակարգի» մեջ չի մտնում մորթվող, ունեզրկվող, հայրենազրկվող հայերի մասին բարձրաձայնելը, նա շատ կուզենար, որ հայ ժողովուրդն ադրբեջանցիներից շնորհակալություն հայտներ անգամ մորթվելու համար: Իսկ Իսրայելի վարչապետ Գոլդա Մեյերն ասում է. «Չի կարելի խաղաղության մասին խոսել նրանց հետ, ովքեր եկել են քեզ սպանելու»:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Զինվորն ականի պայթյունից վիրավորվել է

Հունիսի 18-ին կամ 19-ին Գուգարք գյուղում, զորավարժության ժամանակ հակահետեւակային ականի պայթյունից հատուկ նշանակության բրիգադի զինծառայողի ոտքը վնասվել է: Որոշ տեղեկությունների համաձայն՝ զորավարժություններում օգտագործվել են մարտական ականներ: Դեպքի մասին հարց ուղղեցինք պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արամ Թորոսյանին: Նա հաստատեց մեր լուրը եւ հայտնեց. «Զինծառայողը վիրահատվել է, գտնվում է բժիշկների հսկողության ներքո, նրա կյանքին վտանգ չի սպառնում, առողջության եւ զինծառայողի այլ անձնական տվյալներ չենք կարող հաղորդել, քանի որ համապատասխան օրենքները (անձնական տվյալների եւ բժշկական գաղտնիքի մասին) թույլ չեն տալիս»:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԻՐԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Իրանական թեման քանի որ շարունակում է մնալ ակտուալ, ներկայացնենք քաղաքագետ Ալեքսեյ Մակարկինի վերլուծական հոդվածը իրանական իշխանական-քաղաքական համակարգի առանձնահատկությունների մասին: Իրանական իշխանական համակարգը, ըստ փորձագետի, տարբերվում է մի շարք որակներով: Այստեղ առկա է ներքին բավականին երփներանգ պլյուրալիզմ՝ պայմանավորված տարատեսակ իսլամական քաղաքական ուժերի եւ առանցքային որոշումների կայացման ընթացքում գործող ոչ թափանցիկ մեխանիզմների գոյությամբ: Իսկ վերջնական որոշում կայացնողը գերագույն առաջնորդն է՝ Ռահբարը:

Այժմյան իրավիճակում պլյուրալիզմը պահպանվում է, իսկ թափանցիկությունը նվազում է, քանի որ անհասկանալի է, թե ինչ վիճակում է գտնվում նոր Ռահբար Մոջթաբա Խամենեին, եւ ովքեր են այն անձինք, ովքեր կազմում են նրա մերձավոր շրջապատը: Դրա համար էլ ցանկացած լուրջ ազդակ Իրանից՝ վերլուծվում է ոչ պակաս մանրակրկիտ կերպով, քան կես դար առաջ՝ սովետական քաղբյուրոյի կազմը: Այսպես. Մոջթաբա Խամենեիի հայտարարությունների մասին: Դրանք սովորաբար տարածվում են գրավոր տեսքով եւ ծավալուն չեն: Հատկապես ներկայիս բանակցային պրոցեսի մասով ընդգծվում է, որ բանակցային պրոցեսում «պատասխանատու պաշտոնատար անձինք» զգալի քայլեր են ձեռնարկել «անկեղծ հոգածությամբ եւ բարեխիղճ կերպով»: Սա նշանակում է, որ առնվազն Ռահբարն իր հովանու ներքո է վերցրել բանակցողներ Մոհամադ Բաղերի Ղալիբաֆին եւ Աբաս Արաղչուն, որոնց իրանական ծայրահեղ աջականներն արդեն սկսել են մեղադրել դավաճանության մեջ:

Մյուս կողմից, Ռահբարը հասկացնում է, որ փոխըմբռնման հուշագիրն իրեն առանձնապես դուր չի գալիս: Դա բնական է: Ցանկացած փոխզիջում ԱՄՆ կողմից չի կարող դուր գալ Մոջթաբային, որը պատերազմի ընթացքում կորցրել է հորը, կնոջը եւ քրոջը, իսկ ինքը պարզապես հրաշքով է ողջ մնացել: Սա նաեւ անձնական հարց է Ռահբարի համար: Այս ամենով հանդերձ՝ նրա թույլտվությամբ հուշագիրը ստորագրվում է: Սակայն ողջ պատասխանատվությունը դրված է նախագահ Մասուդ Փեզեշկիանի վրա, որը նաեւ ղեկավարում է Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդը: Փեզեշկիանն էլ իր հերթին գծում է իր համար թուլատրելիության սահմանը, ըստ որի՝ եթե ամերիկյան կողմը փորձի չափից դուրս շատ պահանջներ դնել, ապա դրանց չի ենթարկվելու: Ապագայում կայանալիք բանակցություններն էլ չեն կարող նշանակել հակառակորդի դիրքորոշման ընդունում:

Իսկ հիմա՝ ամենակարեւորի մասին: Ովքեր են Ռահբարի մերձավոր շրջապատում: Այս տարվա մարտին նրա ռազմական խորհրդական է նշանակվել Մոխսեն Ռըզային՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի նախկին հրամանատարը: Նա ու Ղալիբաֆը եղել են ծառայակիցներ եւ քաղաքական առումով դաշնակիցներ են համարվում: Ղալիբաֆն ու Փեզեշկիանը համարվում են մրցակիցներ: Նույն՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսից էլ, հանձին փոխհրամանատար Սարդար Ջավանիի, հնչում է հայտարարություն, որը կարելի է հասկանալ որպես աջակցություն բանակցային պրոցեսին: Ջավանին կարծում է, որ պետք է պահպանել միասնականությունն ու պաշտպանել ազգային շահերը: Զուգահեռաբար՝ ցանկացած որոշում պետք է կայացնել ողջամտորեն եւ իրապաշտորեն: Ու բոլոր նրանք, ովքեր բանակցությունները համարում են դավաճանություն, հարվածում են իրականում Իրանի շահերին, եւ հակառակորդն էլ նման հայացքներ ունեցողներին ակամա օգտագործում է ի շահ իրեն: Բանակցություններն էլ, ըստ նրա, հրադադարի հետ միասին՝ ռացիոնալ են, այսինքն՝ ողջամիտ ու իրապաշտ, երբ ուժի ու արժանապատվության դիրքերից են ու չեն նշանակում կապիտուլյացիա: Այստեղ մի նրբություն էլ կա, որը պետք է ընկալել որպես իրանական ազդեցիկ խմբերից մեկի տեսակետ: Ջավանին նշում է, որ իմաստուն է այն մարդը, որը լսում է, մտորում եւ մտածում, ճիշտ է վերլուծում իրավիճակը, հասկանում է խնդիրները, որոշումներն էլ կայացնում է դրանց հիման վրա: Ընդ որում, ներկա իրավիճակում նաեւ կարողանում է կանխել մոլորությունները, ճշմարիտ ուղուց շեղվելուց եւ հասարակությանը պահել ճշմարիտ ուղու վրա: Սա այլ բան չէ, քան աջակցություն բանակցային պրոցեսին եւ ծայրահեղ պահպանողականության դեմ արված քննադատություն՝ եզրակացնում է ռուսաստանցի փորձագետը, փորձելով հասկանալ Իրանի իշխանական համակարգի ներսում տիրող տրամադրությունները:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմության եւ իրականության միջեւ

Ժամանակակից ռուսական գրականության երեւելի դեմքերից մեկի՝ Էդվարդ Ռադզինսկու ստեղծագործությունները մի քանի ժանրային ուղղությունների են՝ դրամատուրգիա, պատմական արձակ, վիպականացված կենսապատումներ, սցենարային արվեստ եւ հրապարակախոսություն: Մի քանի տասնամյակում նա ստեղծել է բազում գործեր, որտեղ պատմական փաստը համադրված է գեղարվեստական վերակառուցման, վավերագրությունը՝ հեղինակային մեկնաբանության հետ: Մոսկվայի պատմաարխիվային ինստիտուտն ավարտելուց հետո նա սկսում է աշխատել թատրոնում. առավել հայտնի պիեսներից են. «104 էջ՝ սիրո մասին», «Զրույցներ Սոկրատեսի հետ», «Ներոնի եւ Սենեկայի անվան թատրոնը», «Լունինը կամ Ժակի մահը» եւ այլն: Հատկապես մեծ արձագանքի է արժանացել «104 էջ՝ սիրո մասին» պիեսը, որն էկրանավորվել է «Եվս մեկ անգամ՝ սիրո մասին» ֆիլմում: Ռադզինսկու դրամատուրգիայի համար հատկանշական է փիլիսոփայական ուղղվածությունը: Նրա հերոսները մշտապես ճշմարտության, ազատության եւ սեփական առաքելության որոնումներում են: Նա ցույց է տալիս, որ մարդկային գոյության ողջ ընթացքում բոլոր հիմնահարցերը շարունակում են անփոփոխ մնալ: Բայց Ռադզինսկու ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում պատմական թեմատիկան: Դա յուրօրինակ խոսք է ռուսական գրականության մեջ. «Ստալին», «Նիկոլայ 2-րդ. կյանքը եւ մահը», «Նապոլեոն», «Ալեքսանդր 2-րդ», «Ռասպուտին», «Իշխանազնուհի Տարականովա» եւ այլ գործերում նա ձգտում է պատմական անցքերը գրավիչ պատումով ներկայացնել, օգտագործում է արխիվային նյութեր, նամակներ, օրագրեր, ժամանակակիցների հիշողություններ, եւ պատմական անձինք նրա գրչի ներքո «վերակենդանանում են»: Հենց դա է նրա գրքերի համար լայն ճանաչում ապահովել:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԳՐՈՂԻՆ ՈՒՂՂՈՐԴԵԼ՝ ԻՆՉՊԵՍ ՄՏԱԾԵԼ, ԻՆՉ ԽՈՍԵԼ

*«Հրապարակի» զրուցակիցը Հայաստանի գրողների միության նախագահ, բանաստեղծ **Էդվարդ Միլիտոնյանն** է:*



- Պարոն Միլիտոնյան, օրեր առաջ Հայաստանի գրողների միությունն անդամատոմսեր տրամադրեց իր նոր անդամներին, որոնց շարքերում նկատեցինք նաեւ սկսնակ ստեղծագործողների, որոնց գրող անվանելը փոքր ինչ դժվար է: Ի՞նչ սկզբունքով եք կատարում ընդունելություն, ինչպե՞ս եք ընտրում ՀԳՄ նոր անդամներին եւ կողմնորոշվում, թե նրանցից ովքեր են արժանի:

- Առաջին հերթին նրանք գրքեր են ներկայացնում: Դրական կլինի, որ թեկնածուն առնվազն երկու գիրք հրատարակած ունենա եւ ներկայացնի մեզ, ինչպես նաեւ՝ հայտնի լինի գրական մամուլում: Սկզբունքը դա է: Կարդում է հանձնաժողովը, այս անգամ մենք ընդունեցինք մեր մարզերի երիտասարդ գրողներին: Նրանց շարքերում կան նաեւ մրցանակակիրներ:

- Իսկ ովքե՞ր են հանձնաժողովի կազմում:

- Հանձնաժողովում մեր նախագահության անդամներն են, ինչպես նաեւ՝ բաժանմունքների ղեկավարները:

- Միությունն այս պահին քանի՞ անդամ ունի:

- Այս պահի դրությամբ ունենք 500 եւ ավելի անդամ եւ 60 պատվավոր անդամ:

- Ի՞նչ սկզբունքով եք շնորհում «պատվավորի» կոչումը, ի դեպ՝ որքա՞ն է անդամավճարը:

- Տարեկան չորս հազար դրամ: Սրանից մի քանի տարի առաջ հազար դրամ էր:

- Իշխանությունները ցանկանում էին ստեղծագործական միությունների շենքերը, այդ թվում՝ ՀԳՄ շենքը, վերցնել ձեզնից: Դատական հայց էիք ներկայացրել, այժմ ի՞նչ ընթացքի մեջ է այդ պրոցեսը:

- Դատական նիստը հետաձգվել է, պիտի սեպտեմբերին լինի՝ երեք դատական նիստ: Չգիտեմ, թե ինչու է դատարանը հետաձգում նիստերը:

- Երբ Գրողների միության անդամ դառնալու համար դիմում են, լինո՞ւմ է այնպես, որ ստեղծագործողը թույլ գրիչ ունենա, չկարողանա իր խոսքն ընթերցողին տեղ հասցնել: Երբեմն Գրողների միության անդամ են դառնում մարդիկ, որոնք չեն փայլում իրենց ստեղծած գրականությամբ:

- «Թույլ» կամ «ուժեղ» ասվածը հարաբերական է: Մեկին կարող է դուր գալ, մյուսին՝ դուր չգալ: Մեկը կարող է ուժեղ համարել, մյուսը՝ թույլ: Հանձնաժողովն ընթերցում է, ասում է իր կարծիքը, քննարկում է ծավալվում: Մենք մարզերի հետ էլ ենք շատ աշխատում: Գաղտնիք չէ, որ մարզերում հատկապես՝ տղերքը շատ քիչ են գրում:

- Միությունն ունի 600-ից ավելի անդամ, բայց հասարակությունը նրանցից անգամ 60-ին չի ճանաչում, ընդամենը մի քանիսին են ճանաչում մարդիկ, այն էլ՝ ընթերցասեր խավը միայն: Ինչո՞վ է պայմանավորված, որ գրողն իր դերը, ազդեցությունն այս աստիճան կորցրել է:

- Ձեր նշած թվի մեջ 120-ը սփյուռքի մեր գրողներն են, հետո կան գրականագետներ, արվեստաբաններ, այնպես չէ, որ նրանք՝ բոլորը, գրողներ են: Ինչ վերաբերում է գրողներին ճանաչելուն, ապա ճանաչելու համար պետք է կարդալ, եթե չեն կարդում, բնական է, որ չեն ճանաչում: Ի՞նչ անենք մենք, ինչ հնարավոր է՝ անում ենք:

- Գուցե լավ չեն գրում շատերը, գուցե, մեծ հաշվով, ասելիք չունեն կամ գուցե շատ պասիվ են:

- Ես կարծում եմ, որ մեր հասարակության մեջ կան կարդացող եւ չկարդացող մարդիկ: Նրանք, ովքեր գիրք չեն կարդում, լավ կանեն, որ կարդան, Աստված իրենց հետ: Գրողների միությունում այնպես չէ, որ բոլոր անդամները գրողներ են կամ Նկարիչների միությունում բոլորը նկարիչներ են…. օրինակ՝ մենք ունենք թարգմանիչներ, հրապարակախոսներ, գրականագետներ, հո բոլորը գրողներ չե՞ն:

- Ինչո՞ւ է այնպես ստացվել, որ քիչ թե շատ ակտիվ, ճանաչված գրողները, որոնք, ի դեպ, ՀԳՄ անդամ են, իրենց գործունեությունը ծավալում են միության շենքից դուրս: Օրինակ՝ բանաստեղծ Մարինե Պետրոսյանը «Մենք» անունով ակումբ է հիմնադրել, ակումբը հավաքներն անցկացնում է տարբեր սրճարաններում: Ի՞նչն է խնդիրը, որ նրանց հարթակ չեք տրամադրում, թե՞ նրանք չեն ցանկանում:

- Մարինեն միություն գալիս էլ է, գնում էլ է, ազատ մարդիկ են, գուցե սրճարանում են ուզում հավաքվել, գուցե՝ մեկ այլ վայրում: Գրողների միությունը երբեք չի կաշկանդում որեւէ գրողի եւ չի պարտադրում ոչինչ: Ազատ մարդիկ են՝ իրենց կարծիքներով, իրենց գրական ուղղվածություններով: Մարինեն էլ մեր միության անդամն է, եթե ցանկանա մեզ մոտ անցկացնել հավաքները, ես ոչ մի խնդիր չեմ տեսնում: Երիտասարդների համար էլ կլոր սրահը միշտ բաց է, կարող են գալ, կարդալ իրենց գործերը, քննարկել դրանք: Ես ոչ մեկի առաջ դռներ չեմ փակում: Ասեմ ավելին՝ հիմա շատ են հնարավորությունները երիտասարդների համար: Օրինակ՝ «Գրեթերթը» հենց երիտասարդների համար էր նախատեսված:

- Բայց «Գրեթերթ»-ը վաղուց այլեւս չի տպագրվում, պետությունը դադարեցրեց ֆինանսավորումը: Ի դեպ, ՀԳՄ հրատարակչությունը չի՞ ֆինանսավորվում պետության կողմից:

- Ոչ, ՀԳՄ հրատարակչությունը մնացյալ հրատարակչությունների նման է աշխատում, վճարում են հեղինակները, գրքերը տպվում են: Միշտ էլ էդպես է եղել: Պետությունն առանձին իր կողմից դրամաշնորհային մրցույթ է անցկացնում՝ ԿԳՄՍ նախարարությունը: Մոտավորապես 17 տարի կար «Աջակցություն ժամանակակից գրականությանը» ծրագիր, հիմա պարզապես դրամաշնորհային ծրագիր է գործում:

- Հաճախ գրողներին քննադատում են կարծիք չհայտնելու, չընդունելու, կրավորական կեցվածք ունենալու համար: Չե՞ք կարծում, որ գրողները պետք է խոսեն պետության առջեւ ծառացած խնդիրների մասին, ինչպես, օրինակ, անում էին Հրանտ Մաթեւոսյանը, Վարդգես Պետրոսյանը, Սիլվա Կապուտիկյանը….

- Գրողին չեն ասում՝ խոսիր կամ մի խոսիր, գրողն ինքն է որոշում: Ցանկացած գրող ունի իր ազատությունն ու մտածողությունը: Գրողների միությունը չի կարող գրողին ուղղորդել՝ ինչպես մտածել: Գրողների միությունն ունի տարբեր կուսակցությունների անդամներ եւ նման հարցերում ազատ է:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՔՈԼՈՅԱՆԻ ԺԱՄԿԵՏԻ ՀԻՆԳ ՏԱՐՈՒՑ ԵՐԿՈՒՍՆ ԱՆՑԱՎ

Երեւանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Մալվինա Հարությունյանի նախագահությամբ, մերժել է Հանրային ռադիոյի նախկին տնօրեն Գարեգին Խումարյանի հայցն ընդդեմ Հանրային հեռարձակողի խորհրդի:

Հիշեցնենք, որ Խումարյանը պահանջում էր 29.07.2024 թ. Հանրային հեռարձակողի խորհրդի՝ Հանրային ռադիոյի գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման նպատակով անցկացված մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումը ճանաչել ոչ իրավաչափ:

Ռադիոյի տնօրենի ընտրությունն ուղեկցվեց սկանդալներով, նրա մրցակիցներից երկուսը՝ Գարեգին Խումարյանն ու Լուսինե Պետրոսյանը, դիմեցին դատարան, սակայն դատաքննությունն անվերջ ձգվեց, իսկ Արմեն Քոլոյանը զբաղեցրեց տնօրենի պաշտոնը՝ առանց դատարանի որոշման:

«Դեռ փաստաբանների խմբի հետ չենք հանդիպել այս հարցերի շուրջ, դժվարանում եմ որոշում հայտնել այս պահին, մերժման հիմքերին ծանոթ եմ, բայց չեմ ուզում այս պահին գնահատական տալ, որովհետեւ առանձնապես կոմպետենտ չի լինի ասածս»,- ասաց Խումարյանը՝ չբացառելով, որ կբողոքարկի առաջին ատյանի դատարանի որոշումը: Անդրադառնալով նախորդ տարի իրեն առաջադրված մեղադրանքին՝ կեղծ դատավարական փաստաթղթեր կազմելու վերաբերյալ, Խումարյանն ասաց, որ մեղադրանքը չի ընդունում, բացարձակապես անհիմն մեղադրանք է, եւ սա էլ է դատաքննության փուլում. «Այդ քրեական գործն ուղիղ շարունակությունն է Հանրային հեռարձակողի խորհրդի դեմ իմ հայցին»:

ՀՀԽ-ն Հանրային ռադիոյի տնօրեն նշանակում է 5 տարով: Այսինքն՝ Արմեն Քոլոյանին 3 տարին է մնացել, մինչեւ ժամկետի ավարտը: Երբ իշխանություններին է անհրաժեշտ, դատարանները հաշված օրերի ընթացքում վճիռներ են կայացնում, օրինակ, այդպես եղավ, երբ Նիկոլ Փաշինյանը հարձակում սկսեց Եկեղեցու դեմ, եւ հարկավոր էր Վեհափառի ու եպիսկոպոսների դեմ կեղծ վարույթներ հարուցել, արգելել նրանց ելքը երկրից կամ՝ տիրադավ քահանաներին ու սրբազաններին վերականգնել իրենց կարգավիճակում, թեեւ դատարանը դրա իրավունքը չուներ: Սակայն նման դեպքերում, երբ քաղաքացին դիմել է՝ իր իրավունքները վերականգնելու եւ անարդար մրցույթը չեղարկելու հարցով, դատական պրոցեսը տեւում է տարիներ: Խումարյանը, մեզ հետ զրույցում անդրադառնալով նաեւ այս հարցին, ասաց, որ իր համար նույնպես անհասկանալի է, թե դատարանն ինչու է այսքան դանդաղ գործում, եւ որ ինքը չունի այդ հարցի հստակ պատասխանը:

ԴՕԿ-Ը ԴԻՄԵԼՈՒ Է ՍԴ, ՈՐ ԻՐԵՆՑ ԴԻՄՈՒՄՆ ԱՆՋԱՏ ՔՆՆՎԻ

Հունիսի 7-ի ընտրություններին մասնակցած 18 քաղաքական ուժերից 7-ը դիմել է Սահմանադրական դատարան՝ պահանջելով չեղարկել ընտրությունների արդյունքները, որոնք հրապարակել է ԿՀԸ-ն: ՍԴ-ն հունիսի 21-ի աշխատակարգային նիստում քննության է ընդունել «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» կուսակցությունների դաշինքների, «Միասնության թեւեր», «Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն», «Բարգավաճ Հայաստան», «Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք», «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունների դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործերը:

Հաշվի առնելով, որ նշված գործերը վերաբերում են նույն հարցին, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի՝ նշված գործերը միավորվել են եւ քննվելու են դատարանի նույն նիստում: Մենք ՍԴ նախկին դատավոր Կիմ Բալայանից հետաքրքրվել էինք, թե որ դեպքում է ՍԴ-ն դիմումները միավորում մեկ վարույթով: Բալայանը պատասխանել էր. «Ճիշտ է՝ բոլորը դիմել են ընտրությունների արդյունքները վիճարկելու համար, բայց մենք չգիտենք դիմումների բովանդակությունները: Չգիտենք, թե ինչ հիմքով են վիճարկում: Ընդհանուր առմամբ, ՍԴ-ն միավորման իրավունք ունի, որպեսզի միավորի մեկ գործի մեջ, բայց եթե տարբեր հիմքերով են դիմել, չի կարող միավորել»:

ԴՕԿ կուսակցության կողմից ՍԴ ներկայացված դիմումի հիմքերի ու սպասելիքների շուրջ զրուցել ենք ԴՕԿ կուսակցության ցուցակի երկրորդ համար, փաստաբան **Լեւոն Բաղդասարյանի** հետ, որն այս ընթացքում կազմակերպել է նախընտրական ողջ գործընթացը, քանի որ կուսակցության նախագահ Վարդան Ղուկասյանը գտնվում է ԱՄՆ-ում եւ դեռ պահվում է էմիգրացիոն կալանավայրում:

- Հունիսի 19-ին ԴՕԿ կուսակցությունը եւս դիմել է ՍԴ՝ ընտրությունների արդյունքները վիճարկելու համար: Ի՞նչ հիմքերով եք վիճարկել ընտրությունները:

- Ի տարբերություն այլ քաղաքական ուժերի, մենք ՍԴ ենք դիմել եւ վարչական ռեսուրսի կիրառման համար, եւ օլիգարխիայի ու ընտրակաշառքի այլ քաղաքական ուժերի գործառույթների հետ կապված: Ասինքն՝ մենք տարբերվում եք մյուս քաղաքական ուժերից, որոնց մի մասը գրում է՝ վարչական ռեսուրս, մյուս մասն էլ գրում է՝ ընտրակաշառք: Մենք ունենք համապատասխան ապացույցներ, փաստեր, որոնց ուժով գտնում ենք, որ էական ազդեցություն է թողել այս ընտրությունը ընտրողների ձայների վրա:

- Դուք նշեցիք, որ ապացույցներ ունեք: Ի՞նչ ապացույցների մասին է խոսքը:

- Ե՛վ պետական լիազոր մարմինների, եւ փորձագետների կողմից տրված գնահատականներ են: Խոսքը վերաբերում է այն ուժերին, ովքեր որ անցան: Այսինքն, ի տարբերություն այլ քաղաքական ուժերի, մենք բազմիցս հայտարարել ենք, որ դեմ ենք եւ նախկիններին իշխանությանը, եւ ներկաների: Ընտրության արդյունքները ցույց տվեցին, որ ԱԺ անցան նախկիններն ու ներկաները, եւ մեր դիմումը վերաբերում է ինչպես վարչական ռեսուրսին, այնպես էլ ԱԺ անցած ուժերի տված ընտրակաշառքներին, որն էական ազդեցություն թողեց ընտրողների ձայների վրա:

- ՍԴ-ն մեկ վարույթով քննելու է դիմումները, դուք տեսնո՞ւմ եք համագործակցության եզրեր ՍԴ դիմած մյուս քաղաքական ուժերի փաստաբանական թիմերի հետ:

- Մենք միջնորդություն ենք ներկայացնելու, որպեսզի մեր դիմումն անջատ քննվի, քանի որ, ի տարբերություն մյուս քաղաքական ուժերի, մենք երկու հիմքով ենք դիմել ՍԴ:

- Ի՞նչ սպասելիքներ ունեք ՍԴ-ից:

- Այնպես չէ, որ հիացած եմ դատական իշխանությամբ, այդ թվում՝ նաեւ սահմանադրական արդարադատության հետ կապված, բայց, որպես իրավապաշտպան, կարողացել եմ հանրային հնչեղություն ունեցող գործերում գրանցել նախադեպային որոշումներ: Սպասելիքներ, որպես այդպիսին, ինչպես նշեցի, հիացած չեմ արդարադատությամբ, բայց այն, որ փաստերը կդրվեն հանրության եւ դատական իշխանության առաջ, որի ուժով ընտրությունների արդյունքում առարկայական փոփոխություն է տեղի ունեցել, մասնավորապես ԴՕԿ կուսակցության ձայները փոշիացվել են՝ ինչպես վարչական ռեսուրսի, այնպես էլ ընտրակաշառքի պահով, ես դա կապացուցեմ, մնացածը թող գնահատական տա դատարանը, ինչպես նաեւ՝ հանրությունն իր կարծիքը կարտահայտի:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 23.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՍՈՒՆԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Իմ կարծիքով, այլեւս ավարտվել են ոչ միայն ընտրությունները, այլ նաեւ այն ժամանակը, երբ հնարավոր էր հետընտրական գործընթացներ գեներացնել: Հիմա արդեն ո՛չ ընտրությունների եւ ո՛չ էլ հետընտրական գործընթացներ գեներացնելու մասին խոսելու ժամանակը չէ: Հիմա եկել է դրանցից հետեւություններ անելու ժամանակը:

Սակայն, մինչեւ հետեւություններին հասնելը, ուզում եմ Նիկոլ Փաշինյանին ասել, որ ես՝ որպես ՀՀ քաղաքացի, իմ ձայնն «Ուժեղ Հայաստանին» եմ տվել: Ու դա չեմ արել, որովհետեւ Սամվել Կարապետյանից փող կամ կաշառք եմ ստացել, այլ արել եմ, որովհետեւ համոզված եմ, որ քո՝ իշխանության մնալը Հայաստանի համար ավելի շատ խնդիրներ է ստեղծելու, քան դրանց լուծման ճանապարհներ է գտնելու: Բայց, որովհետեւ այս հոդվածի ասելիքը ոչ թե Լեւոն Տեր-Պետրոսյանի ու Ռոբերտ Քոչարյանի, ոչ թե Սերժ Սարգսյանի ու Նիկոլ Փաշինյանի կառուցած հայաստանների, այլ նրանց կառուցածից տարբեր Հայաստան կառուցելու մասին է, մենք հենց դրա համար էլ կկենտրոնանանք ոչ թե Նիկոլի, այլ ընդդիմության ասածների ու արածների վրա:

Նախ, եկեք արձանագրենք, որ, ի տարբերություն Նիկոլի, որն անմիջապես հասկացավ, որ այս ընտրություններն ու ընդդիմության կողմից հետընտրական գործընթացներ չգեներացնելն իր համար լինել-չլինելու խնդիր են, այս ընդդիմությունն այդպես էլ չհասկացավ, որ իր համար էլ ընտրություններն ու հետընտրական գործընթացներ գեներացնելն էր կենաց-մահու կռվի վերածվել: Ու որքան որ իր կողմից հետընտրական գործընթացներ չգեներացնելն էր Նիկոլի համար ճակատագրական նշանակության հարց դարձել, այդքան էլ իր համար հետընտրական գործընթացներ գեներացնելն էր լինել-չլինելու խնդրի վերածվել:

Եվ եթե ընդդիմությունն այս իմաստով շարունակի չհասկանալ, որ իր այսօրվա բոլոր խնդիրները ոչ թե սահմանադրական կարգը պահելու մասին քիչ խոսելուց, այլ հետընտրական գործընթացներ չգեներացնելուց են գալիս, շարունակի չհասկանալ, որ ավելի շատ սահմանադրական կարգից, քան ժողովրդի քվեն հեղափոխությամբ պահելուց խոսելով ինքը ոչ թե երկրին է ծառայություն մատուցում, այլ Նիկոլի ջրաղացին է ջուր լցնում, շարունակի չհասկանալ, որ փոփոխությունները կարեւորելու փոխարեն հեղափոխությունից հեռու մնալը կարեւորելով ինքը ոչ թե երկրի կայունությանն է նպաստում, այլ Նիկոլին է ավելի սանձարձակ դարձնում, նա հասարակության համար ինչպես եղել, այնպես էլ կշարունակի լինել որպես իր հարմարության համար պայքարող ընդդիմություն:

Իսկ եթե նա հասկանա, որ Հայաստանի խնդիրը ոչ թե Նիկոլի կրծքին փակցված քարտեզը, այլ Ադրբեջանի առաջ կապիտուլացված Նիկոլն է, եթե գիտակցի, որ իշխանափոխություն չանելն այլեւս հեղափոխություն անելուց ավելի վտանգավոր է դարձել, եթե իր հաշվարկներում ու գնահատականներում առաջնորդվի ոչ թե նրանով, որ Ադրբեջանը կարող է պատերազմ սկսել, այլ նրանով, որ Ադրբեջանը պատերազմ չի սկսի, որովհետեւ խաղաղությունն իրեն Հայաստանից ավելի շատ է պետք, ապա այդ դեպքում կարող ենք պնդել, որ մեր ընդդիմությունն արդեն առաջվա ընդդիմությունը չէ, որ նա այլեւս երկիր փոխող եւ, որն ամենակարեւորն է՝ երկիրը փոխելու համար նույնիսկ հեղափոխության պատասխանատվություն ստանձնող ընդդիմություն է դարձել:

Եվս մի հանգամանք, որին պետք է անդրադառնանք: Խոսքը Թուրքիայում վերջերս հնչած թուրանական միջանցքի մասին է: Թուրքիայի պարոնայք պետական գործիչներ, միշտ հիշեք եւ ականջներիդ օղ արեք՝ դուք կարող եք խաբել Նիկոլին, դուք կարող եք վախեցնել Նիկոլին, բայց հայ ժողովրդին խաբել կամ վախեցնել չեք կարող: Հայաստանը կարող էր հարմարվել ու հարմարվեց ԹՐԻՓՓ-ին, բայց նա թույլ չի տա, որ դուք մտածեք, թե Հայաստանը հիմա կամ երբեւէ կարող է կամ կհարմարվի Ձեր «Զանգեզուրի կամ Թուրանի միջանցքներին»: Այդքանը հասկանալը Ձեզ համար այնքան էլ դժվար չի լինի, եթե, իհարկե, կարողանաք ճիշտ հետեւություններ անել Հայաստանի ընտրություններում գրանցված արդյունքներից:

Իսկ այդ արդյունքները, պարոնայք թուրք-ադրբեջանական գործիչներ, ոչ թե Նիկոլի իշխանության ամրության, այլ Նիկոլին իշխանությունից հեռացնելու հնարավորության մասին են:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am